



393

891.99.092 474

Z-42

унич

1353

1353

57

Ruth

AP2

$$2 = 42$$

ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ

УДАР

486

(Խ. ԱԲՈՎԵԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԱՌԴՈՒԹՅՈՒՆ)



(Արտաստիճան «ՀՈՒԽԱՅ» հանդիսաց)

RECEIVED NO. 638



Административное Управление
ФД Арм. ССР
НАУЧНО-ПРАКТИЧЕСКАЯ
БИБЛИОТЕКА

SΦΛΤΟ

Տպարան Ա. Շարածէի և Ընկ., Կիւ. 21

1898

ՊՐԵՍԵՐՎ ՎԱՐԱՐԱՆ

393-62

ՏԱՐԱՎԻ ՎԱՐԱՐԱՆ

ԱՐՄԱՆԻ ՎԱՐԱՐԱՆ ՊՐԵՍԵՐՎ

Дозволено цензурою Тифлисъ. 14-го Января 1898 г.



295-2013

ՑԱՌԱՋԱԲԱՆ.

«Հայրենասիրի ողբ» ի հառաջանքներով սնուած հայ սերունդները հետզհետէ նորանոր «Վէրքելի» պատճառած ցաւըն զգալով՝ աւելի և մեծ փափագով և հոգեկան թախիծով էին կարգում այդ վերքերից մէկի հոգեշունչ նկարագրութիւնը— Խաչատուր Աբովիանի «Վէրք Հայաստանի», Ողբ հայրենասիրի գրուածքը. Պատահնի թէ երիտասարդ, օրիորդ թէ տիկին, ամենքն էլ ցանկանում և փափագում էին անձամբ շօշափել այդ «Վէրքը» և դասագրքեցում կարդացած հատուածների տպաւութիւնն ամբողջացնել. սակայն շատերն ի զուր էին որոնում, աշակերտ և աշակերտուհիք ի զուր էին ուսուցիչներին խնդրում ու պաղատառ իրենց համար «Վէրք Հայաստանին» ճարել. Վերջին երկու տասնամետակում այդ գրքի միակ տպագրութեան օրինակներն այնքան սակաւացել, հազուագիւտ էին դարձել, որ շատերի փափագն անկատար էր մնում: Ճատ շատերը դիմել են հանգուցեալ Վարդան Աբովիանին՝ շատերը դիմել են հանգուցեալ Վարդան Աբովիանին՝ առաջարկութեան իրաւունքը ձեռք բերելու,—ի միջն այլոց տպագրութեան գերիս գրողը նոյնպէս, մի փոքրիկ խումբ գրականութեամբ զրադուող պարոնների հետ դիմել է հանգուցեալին, մի քանի տարի առաջ—սակայն ինչ ինչ պատճառներով բալորն էլ անյաջող ելք են ունեցել:

Այժմ վերջապէս բոլորի ցանկութիւնը կատարուած է. մեր առաջը գրուած է ոչ թէ միայն «Վէրք Հայաստանին», այլ և մի ստուար հատոր՝ կազմուած Աբովիանի արդէն տպագրուած, բայց վաղուց սպառուած աշխատութիւններից:

Դէտք է չնորհակալ լինել պ. Խսահակ Ժամհարեանից, որ յաջողեցրեց այդ վեցի տպագրութիւնը և հմուտ գրչի խմբային հոյս հանելով՝ հայ բանասիրին միջոց տուեց իր գրութեամբ ի լոյս հանելով՝ հայ բանասիրին միջոց տուեց իր ամենասիրելի հեղինակի երկերը կարդալու: Մենք ամենայն համակրանքով վերաբերուելով պ. Ժամհարեանի հրատարակութեանը՝ մի բան միայն կցանկանայինք ասել՝ առիթից օգտուելով:

Աբովիանի երկերի թագն ու պսակը, հեղինակին հռչակ տուող գործը, «Վէրք Հայաստանին», բուն ժողովրդական գլուխուածք է և հէնց բուն ժողովրդի համար էլ գրաւած. բայց այս

տպագրութեամբ ժողովրդին սիրելի այդ զգացմունքների աշխարհը բան ժողովրդին անմատչելի է մեռյա, զնի պատճառով։ Մրանով չենք ուզում ասել թէ գերքը թանկ է զնահատուած։ քաւ լիցի, ուրիշի հրատարակութեամբ գուցէ կրկնակի գին ունենար, բայց խնդիրն այն է, որ բուն ժողովրդի, աղքատ զառակարգի մարդն անկարող է մէկ մանեթ մի գրքի տալ։ Արդեօք հնար չկայ Վէրք Հայաստանին առանձին տպագրել և գինն առ առաւելն 20 կոպ. նշանակել. մենք հաւատացած ենք, որ այդպիսի մի ժողովրդական հրատարակութիւն տասնեակ հազարներով կսպառուի։ Մեր ամենքի ցանկութիւնը պէտք է լինի, որ «Վէրքը» ամեն մի կարդալ իմացող հայի սեղանի դարձը լինի։

«Վէրք»-ի այդպիսի մի հրատարակութիւնը փոքր ինչ կրփոքէ մեծ հայրենասիրի, հետեւալ տարին լրացող, ցաւալիս կորստեան յիսնամեայ տարեդարձի պատճառած վիշտը։

Մեծարգոյ հրատարակիչն իր երկտողի մէջ յիշելով, որ հրատարակութիւնը տեղի է ունեցել հանգուցեալ Վարդան Սրովեանի (Խաչատուրի որդին) համաձայնութեամբ և օժանդակութեամբ, համեստութեամբ նկատում է. «մեր նոր հրատարակութեամբ փոքր ծառայութիւն մատուցանելով հայրենի գրականութեան, մենք կամեցանք դորանով յարգել անմահ Խ. Սրովեանի յիշատակը.»։ Յառաջաբանի վերջին տողերն են. «Հարատարակութեանս ամբողջ արդիւնքը նուիրուած են յօգուա հանգ. Վ. Սրովեանի որբացեալ զաւակաց։»

Սյուպիսի մի յարգելի հրատարակչին հասարակութիւնն ինչ կարող է ասել, բայց խորին շնորհակալութիւն յայտնելուց։

Ժողովածուի խնամքով և հոգացողութեամբ խմբագրող պ. Ստեփանոս Տէր Սարգսեանցն իր յառաջաբանում բացատրում է հրատարակութեան վերաբերեալ հանգամանքները. Բնագրների մասին, ուղղագրութեան, սրբագրութեան, կէտագրութեան, աւելացած գորգիկ հատուածների և ակունքի ից հանած կտորի մասին. վերջը թում է նաև Սրովեանի կենսագրութեան աղբիւրները։

Մի բանում համաձայն չենք պ. խմբագրողի հետ և ափս, որ այդ կէտն առաջուց հրապարակով չէ արծարծուել. ուղղագրութեան խնդիրն է այդ։

Սրովեանի երկերի այս նոր հրատարակութիւնը լոկ ընթերցանութեան և ոչ թէ գիտնական հետազօտութեան նպատակով ի լոյս հանուած լինելով՝ պէտք էր և մինչեւ անգամ անհրաժեշտ՝ հեղինակի կովիտ տառախալներն ուղղել կամ գոնէ միօրինակութիւն պահպանել։ Զվէտքէ մոռանալ, որ այդ երկի ընթերցողների եթէ ոչ մեծագոյն, գոնէ նաև ոչ փոքրագոյն մասը զպրոցական նստարանների վրայ նստած կամ թէ զեռ նոր վեր կացած պատանիներն ու աղջիկներն են լինելու. իսկ այդպիսի խառնաշփոթ ուղղագրութիւնը կարող է նրանց մոլոքեցնել։

Նոյն իսկ գրականական տեսակէտից վայելուշ չէ տառախալներով գիրք հրատարակելը. եթէ այդ սխալներն արդարացնէինք զաւառական հնչիւնաբանութեամբ, այն ժամանակ տասնից հինգ բառը պէտք է սխալ գրէինք։ Մենք հարկաւ այդ սխալների համար խմբագրողին չենք մեղագրում, նա ցանկացել է սրբութեամբ պահել եղած բնագիրը. բայց ցաւն այն է, որ ձեռագիր բնագիրն էլ խսկականը չէ եղել, այլ խսկականից սխալներով արտագրուած և ապա Վարդան Սրովեանի, բնագրի համեմատութեամբ, սրբագրած պատճէնը։

Խաչատուր Սրովեանի կենսագրութիւնը գրուած է նիւթին վայել ջերմ զգացմունքով և ոգենորութեամբ, սակայն պ. Տէր-Սարգսեանն արդէն յայտնի հղածների վրայ նոր բան չէ աւելացնում և իր խոստովանութեամբ էլ աւելի պակաս է տալիս, քան թէ գրականութեան մէջ արդէն հաւաքուած նիւթ կայ այդ մասին։

1897 թ. ամառը, Մանգլիս:

«Վէրք Հայաստանի».

Ի՞նչ դիմիչ անուն, Արդէն վերնագիրը ցոյց է տալիս երկի հեղինակի բանաստեղծական թախիծը: Եւ դարսու վերջին կիսի ո՞ր փոքր ի շատէ զբացէտ հայն չէ դիմուել մեծ «հայ-րենաստիրի ողբը» կարդալով. ո՞ր ազնուասիրտ հայն չէ զբացուել ու արտասուել այդ պէրքնա անձամբ շօշափելով և ո՞ր հայի սիրտ ունեցող մարդը կարող է կարդալ այդ «ողբը» և անձամբ չսղպալ, չզբացուել ու ճխորովուել:

Իսկ ով որ մի անգամ կարդացել է «Վէրքը», նրա խոցուած սիրտն էլ ցմահ չի մոռանայ այն բուռն զբացմունքները, այն սիրուց և վշտից տոշորուած սրտի կոկիծը, այն հոգեկան տանջանքները, ո՞ր բանաստեղծական զբայունութեամբ և իրական վեհութեամբ արտայայտուած են այդ երկի իրաքանչիւր էջի վրայ, Քսան և հինգ տարուայ ընթացքում իմ կարդացած հազարաւոր զբերից ոչ մէկն անջրան արտասուլք չէ քամել աշքերիցս, այնքան դառն վիշտ ու կսկիծ չէ առաջացրել իմ սրտում, այնքան զբացմունքներս չէ բուն-կել, որքան, կարծես սրտի նետարկերով գրուած, «Վէրք Հայաստանին»: Դեռ տասը տարեկան հազիւ կիրնէի, երբ առաջին անգամ կարդացի... բայց միթէ կարելի է և կարդալ սովորական գաղափարը գործ դնել այս դէպքում. ոչ «Վէրքը» չես կարդում, այլ այն հասարակ, կոշտ ու կոպիտ, գեղնագոյն թղթի վրայ տպուած (նախկին տպագրութիւնը) տողերն աշքերիդ միջոցով հոգիդ է ներս թափանցում, սիրտ այրում, խորովում, ձայնդ հետզհետէ կարտում է, կոկորդդ կուշ գալիս, կարծես խեղդուում ես և արտասուժն առատ հոսում է այտերիդ վրայից. մոռանում ես առաջդ դրուած գիրը և հոգիդ սաւառնում է հեռու, հեռու...

Բայց ինչո՞ւ են զբացմունքիդ վրայ այլքան ազգում Քանաքեռի պարզ, անպաճոյճ և նոյն իսկ գեղջկական բար-

բառով արտայայտուած այդ խօսքերը, միթէ գբանք աւելի գեղարուեսական են, քան Շէքսպիրի ու Շիլերի մարդկային ամենավսեմ զգացմունքները նկարագրող գրուածքները, աւելի բանաստեղծական՝ քան Գէօթէի, լորդ Բայրոնի ու Հայնէի, աւելի իրական՝ քան Զօլայի ու Դիկէնսի, աւելի զգայուն՝ քան Ամիշիսի նրբաքանգակ երկերը.նշ, Համեմատելն անգամ անհնարին է: «Վէրք»-ի խօսքերն ազգում են հայ մարդու սրտի վրայ բուռն կերպով, սրովհետև այդ խօսքերը միմիայն գրչի շարժուածքի արդիւնք չեն, այլ նոյն իսկ հեղինակի, Ծրովեանի, սրտի խորքերից գուրս թռած հառաջանքներ ու թախծալի մենախօսութիւններ: Հեղինակն ինքն է խօսում սրտիդ հետ, նա է ամենազգայուն լարերիդ զիվչում և զգացման ամեն տեսակ հընչիններ առաջացնում: Մէկ որ սկսում ես կարդալ «Վէրք»-ը, ուզում ես մէկ շնչով վերջացնել, ողերուում, բորբոքուում ես և բոլորովին աննկատելի են անցնում նրա վիպական թերութիւնները, միջանկեալ ահագին հատուածները և թուրքերէն բառերի մեծ քանակութիւնը. ասում եմ՝ չնայելով այդ արգելառիթ հանգամանքներին, կարկում ես, զգացում և չես ուզում մինչկ վերջացնելով գիրքը ծալել—ինչո՞ւ. որովհետև ինքը հեղինակն էլ այդ զգացումներն է ունեցել զրելիս և «Երեսուն թարաղէն» մի շնչով է գրել: «... կրակը ջանս առաւ... էլ հաց, կերակուր մի շնչով է գրել: «... կրակը ջանս առաւ... էլ հաց, կերակուր մի շնչով է գրել: Ճանձը առաջովս անց կենալիս, ուզում էի, սպանեմ, էնպէս էի վառվել: Հայաստան հրեշտակի պէս առաջին կանգնել՝ ինձ թե էր տալիս... Դիշերվան մինչե սհաթի հինգը ոչ հացի մտիկ արի, ոչ շայի, չիրուին էր իմ կերակուրը, զբիւ ոչ հացը: Երեսուն թարաղէն էն ա լցվելով էր, որ բնութիւնը իր պահանջեց, աշքերս գնաց...»)

* *

«Վէրք Հայաստանի» նոյնն է թէ ասել՝ զբացմունքների՝ աշխարհ: Այս զբացմունքով, անվերջ զբացմունքներով է ներշնչուած մեր նորագոյն գրականութեան այդ աննման ու հոտաւէտ ծաղիկը, աշխարհաբար լիզուին բաղաքացիական իրաւունք տուող այդ դասկան գրուածքը:

Մի թեթեակի հոգեբանական վերուժութեան ենթարկելով այս զգացմունքների աշխարհը, կարող ենք որոշել զգաց-

* Shn յոռաջսբան, էջ 1X և X.

մունքների հետևեալ տեսակները.

1. սէր դէպի իր աշակերտներն ու մանուկները.
2. ընկերական սէր.
3. ծնողական սէր.
4. ամուսնական սէր.
5. սէր դէպի բնութիւնը.
6. կրօնական զգացմունք.
7. սիրոյ զգացմունք.
8. հայրենեաց սէր:

1. Մէր դէպի իր աշակերտներն ու առհասարակ մանուկները:

Սրովեանն իբրև գերմանական կրթութիւն ստացած ու սուցիչ՝ մեծ սիրով և հաւատով է վերաբերում իր դաստիարակչական գործը՝ իր նախկին խալիֆայական աստիճանի վրայ էր գտնում և խեղճ հայ մանուկները դատապարտուած էին ամիսներով ու տարիներով շարունակ իրենց համար անհասկանալի և մատաղ ուղեղներին անմաշչելի սաղմոսներն և յայսմաւուզքները թութակի պէս անգիր սերտել, Սրովեանը եւրոպական մանկավարժական սկզբունքներով դաստիարակութիւն է քարոզում և անձամբ իրագործում: Այդ մանկավարժական սկզբունքի առաջին հիմնաքարտն էր մայրենի լեզուի, աշխարհաբարի ուսուցումը՝ փոխանակ անհասկանալի դարձած զբարարի: «..Սիրտս ուզում էր, պատոի, որ էս էրէխէրանց ձեռքն էլ՝ ինչ չայի գիրք տալիս էի, չին հասկանում... ուզում էի շտա անգամ մաղերս պոկեմ՝ որ էս օտար լեզուքը աւելի էին սիրում, քանց մերը...» *) «... թաք ըլի Դու, դու՝ իմ պատուական ազգ, քո որդու արածը, քո որդու իսկ լեզուն սիրես, ընդունես, ինչպէս հէրը իր մանուկի կմկմալը, որ աշխարքի հետ չի փոխիլ...» **)

Հեղինակը գտան կսկիծով տեսնելով, որ իր հայրենակիցներն իրենց մայրենի լեզուն թողած՝ ուրիշ լեզուներով են խօսում և պարզ ըմբռնելով այդ հանգամանքի կորստալեր հետեւանքները, բացագանչում է: «.. Սիրտս եկել էր, բերնս հասել, ծեսնում էի, որ էլ չայի գիրք ձեռն առնող, էլ չայի լեզուն խօսողքիշա գտնվում: Մէկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հաւա-

*) տես. յառաջաբան էջ V.

**) նոյնը էջ XI.

տը, թէ սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին...» ***)
Նա քաջ գիտէ մայրենի լեզուի գոյութեան նշանակութիւնը և նրա խաղացած մեծ դիրը՝ թէ ազգերի կեանքում ընդհանրապէս և թէ մեր անցեալում մասնաւորապէս: «Էսքան բաները լսեցիր՝ սիրելի կալվացող՝ բաս ինչպէս չի սիրտդ վառ. վիլ, որ զու էն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը նահատակուեց, քո կաթդ ու արինդ ուրիշ ազգի հետ չխառնեց: Էնպէս կարծում ես, քիչ բան ա, հազար տարով էս օրը քաշել, էլի ազգ պահել, որդի մեծացնել, անուն եղու, հաւատ ունենալ: Ա՞յս էս միտք անողը՝ էլ ինչ սիրտ պէտք է ունենայ, որ իր լեզուն, իր ազգը չսիրի: Ասենք ըլբիւլի լեզուն քաղցր ա, վէրու հաւին (խոխորին), սիրամարգին Աստուած գեղեցիկ զոյն, սիրուն թեեր ու բմբուլ ա տվել: Ասենք վարդը շատ գովելի ա, բաս ընչի չի մանիշակը իր ուանգը, իր հոտը նրան տալիս: Միթէ վարդին անսնողը՝ մանիշակին չի սիրիր: Սարի անհոտ ծաղիկն էլ՝ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի փոխիլ. Միթէ բլբւլի լսողը՝ դեղձանիկին (կանարէյ-կին) էլ չի պէտք է պահիր.... Ա՞յս լեզուն, լեզուն, լի զուն որ չըլի, մարդ ընչի նման կըլի: Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը: Լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր. էլ ընչով կարես տալի, թէ որ ազգիցն ես: Ինչ քաղցր, պատուական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մօր կաթը նրա համար շաքարից էլ ա անոշ, մեղրից էլ. էն վայրենի ազգերն էլ իրանց սոպու լեզուն աշխարքի հետ չեն փոխիլ» *):

Այս սիրուն համեմատութիւններն անելով հեղինակը զգացուած բացագանչում է. «ձեզ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդը՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արեխն զուրբան. տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը զայիմ բըռնեցէք. Մէկ դարձակ լեզուն ինչ ա, որ մարդ չկարենայ սովորել: Բաս չէր ուզիլ, որ զուք էլ գրքեր կրէք. ազգի միջումն անուն թողար, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը յաւիտեանս յաւիտենից միայ անմահ:... Աստուած կեանք տայ էն ծնողացը՝ որի որդիքը ինձ մօտ են: Նրանց առաջին խնդիրն միշտ էն ա էլել, որ նրանց որդիքը հայրէն

***) տես. նոյնը էջ IX

*) նոյնը էջ 99 100.

լաւ գիտենան։ Գերեզմանն էլ որ ժամկեմ, նրանց էս սուբբ
խօսքը մտքից չի գնալու...» ^{**)}

Սրովեանը միայն կարդալ գրել չէ սովորեցնում կամ չոս
ու ցամաք գիտելիքներ չէ հաղորդում իր աշակերտներին, այլ
զգացմունքներ է ներշնչում նրանց տպառուսող գեռափը-
թիթ սրտերի մէջ, սիրում է նրանցը՝ մաքուր, ծնողական, բա-
րեկամական սիրով. «.Էլի իմ, իմ աղիղ, իմ սիրելի աշա-
կերտներն էին ընկել ետքից՝ որ բարի մէկ բան էլայ իմա-
նան։ Մէկ առաւոտ փանջարումը նստած էլի մտքիս հետ էի
ընկել, որ նրանք առաջավս անց կացան։ Որ շտեսայ նրանց,
հոգիս տեղընան էլաւ։ Իմ ու նրանց էն օրվան իրար տեսնիլը՝
ով կարայ պատմիլ, ով սիրու ունի, ինքը կիմանայ։ Բարքի թէ
գերեզմանումը էս ձեր սէցը մտքից գնաց՝ այ իմ սիրելի, իմ
աղիղ բարեկամը. թէ չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս-
ա, շունչս բերնումս, ձեզ, ձեզ սուբբ պէտք է համարեմ ինձ
համար, ձեր արեին մեռնիմ։ » ^{*)}

Միմիայն տնկեզծ սիրող կրծքից կարող են այսպիսի
հոգեշունչ խօսքեր զուրս բդիմի. միմիայն մտնուկ սերնդի վրայ
իր յայսը գրած՝ յերմ սիրա ունեցազ ուսուցիչը կարող է բացա-
զանչել. էլրէլիէր ձեր ջանին մեռնիմ, ձեզ իմ ասումիմ դարդը.
ձեզնիմտը եմ գրում. ձեր կրնախն զարբան՝ հոգումն էլ ըլիմ,
էկէր, վրէս կանգնեցէր. թէ ազգասիրութիւնն ու հայրենասիրու-
թիւնը ձեզ վնաս տայ, անիծհցէր ինձ, թէ օգուտ, օրհնեցէր
ու լսեցէր ձեր ընկերների լացն ու սուբբ, նրանց հօրնը մօր
կոկիծն ու ձեր հօրնըմօր ծոցումը դինջ հանդստանալին՝ ասած-
ներս մտքներդ բերէր...» ^{**)}

Նկարազրելով Պարսից խժդժութիւնները, գերեվարութիւնն
ու բոնի կերպով հայերին մահմեղականացնելը, Սրովեանն աւելի
մեծ կոկիծն է պատմում երեխաների կրած տանջանքն ու շար-
շարտնը. «... գաղաններին կմնայ բոլոր մէյդանը. դրանք պէտք
է էս գիշեր մարաքեայ անեն էստեղ. գնանք, գնանք. միսս
սըսուրում ա. օհ՝ ով սիրտ կանի, մօտնեայ. բաս էրէլիքանց հալն
ինչ կըլի. նրանք էրթան չասան խանի օրդուն, լաց կըլին՝
ջան առող չի ըլիլ. կըրփին, կմորմորին՝ մէկ ցաւող չի ըլիւ։

^{**) Նոյնը, էջ 100—101.}

^{*) Նոյնը, յառաջարան էջ VII}

^{**) Նոյնը, էջ 170}

Ամէն մէկը մէկ խանի, կամ Արտիլիքի ձեռք, հաւի պէս կծփայ
կամ լեղապատառ կըլի, կամ սուբբ իր զօշը կմըի, իրան կսպանի,
կամ տանջանքին չդիմանալով կթուրքանայ. ով լսողը ինչպէս
չպատի սարսափիլ...» ^{**)} «... Պարսից զուալուն, հայոց լալուն
ու սքալուն, ու էն անմեղ էրէլիքանց էրվէլուն, ծէծվէլուն,
մղկտալուն, չունքի էս տեղ պէտք է նրանց աչք ու բերան բաց
անեն, որ նրանց գարշէլի երեսը տեսնեն, իրանց ծնողաց
երեսը, իրանց քաղցը հօր տունը մոռանան, ու նրանց արինա-
թաթալի շանգերումը իրանք մրմնչան, նրանց փրփնջան, իրանք
մղկտան, սրանք վլկտան, իրանք զլուխ ու երես ծեծեն, խո-
րովկին, սրանք միրուք ու ճալիքը սղալին ու փառաւորվին,
իրանք հէրնը մեր, ըիր ու ախտէլը ձէն առաջ զօշները եղ
ճոթուն, նվազեն, սրանք իրանց իմամ չուսէինի անունը յիշե-
լով եա ծացըները ուզէնան նրանց առնեն, եա զանտկները,
թրելը սրելով՝ նրանց սրտըներին զէմ անեն, որ լովին։ ^{*)}
«..Մութն էկել ա, գետինն առել նանի ջան, սար ու ձոր
խաւարել, փակփիլ. մենք մէրը կորցրած հաւի ծտերի պէս ընկել
ենք չոլ ու զուգ. ոչ աշըըներս ա քան, ոչ սրաներս՝ զարար,
ախ քաշէլիս՝ կրակ ա գուս գալիս լեզըներիցս. քարերը ականջ.
շունին, որ մեր ձէնը լսեն, սարերը սիրտ չունին, որ մեզ վրայ
ցաւին. երկինքը հեռու, որ մեզ քաշի, տանի, երկիրը թուր
շունի, որ մեզ էլ փրթի կոտորի. ձևմ ասենք մեր դարդը, ա՛խ
ում. ընչի մեզ աշխար բերիք, ընչի մեզ կաթը տվիք, պահեցիք...
Զելըներս կապած, գլխըներս բաց, երկնքի տակին, Ապարանու չօ-
լումը, ձեզ ենք կանչում, ձեզ չենք ուզում, ձեր անունը տալիս, ձեր
խաթեր գալիս այ մեր աղիղ ծնողը. երկնքումն ու ձեր հոգին՝
թողէք. մէկ սհաթ գայ, վըլներս պահտ տայ, երկրումս գեռ
մեր աշքին մի երեխ, հասրաթներս առնենք ու յետոյ, մին,
յետոյ մեր հոգին էլ ձեր հոգուն տանիր... էս օրուան համար.
մեզ սրից, ջըից աղատեցիք, մեր յաւին դարման արիք, մեզ
ջան ասելով, մեր աշքը սրբելով, գոտերը առնելով, սար ու ձոր ընկ-
նելով, մեզ ապսուտ ճարեցիք, ձեր կետանքը խաւարացրիք,
մեզ ծաղկացրիք, դուք թառամեցիք, մեզ դալարացրիք, ձեր ում
բըլչորացրիք, մեզ տանը քունք, դուք հանդում, ջօլում, արիի,
անձրի տակի ջանըհան էլաք, որ մենք զօրանանք. աշըըներիդ,

^{**) Նոյնը, էջ 175}

^{***) Նոյնը, էջ 172—173}

լիոք սպիտակացրիք, որ մենք մեծանանք, հասնինք ձեզ քօմակ ըլինք... Մրբութիւն էիք առնում մեզ հետըներդ տալ տալիս, ժամ էիք գնում մեզ ձեռը մոմ տալիս, Զատիկ էր գալիս, Զրօրհնէք ըլէլիս, կիրակու ժամին, սուրբ պատարագին՝ մեզ խոխտ անում կամ ձեռով տանում քաջ, աւետարան, սեղանի, բեմի, խաչի, պատճերի տուաջին, սրբերի ոտի տակին գիրը, կարդալիս, սկին դուս գալիս՝ մեզ տէրտէրի ոտը քցում, խաչի առաջը զնում, մեզ համբուրել տալիս, դուք էլ համբուրում, աղաչանք անում, որ սուրբ աւտղանի, մեռնի շնորքը մեզ վրայ մեայ, ջուրն ընկնենք՝ մեզ պահի, կրակն ընկնենք՝ մեզ սլրծացնի: մեզ զօրացնի, որ էս օք էս կրակումը, էս բոցումը էրվինք, տանջվինք՝ մեր ձէնը չիմանաք, մաշվինք, փշանանք՝ մեր սուքը չանէք. թրով մեզ կտրատեն, մեզ դուք շազատէք: ... Մէր չունենաս, լայ՝ դու լաց ըլելիս, Կէր չունէնաս գայ՝ դու կոկտալիս, քիրդ մօտիդ չըլի՝ դու սուրբ անէլիս, սխակէրդ ձէնդ չլի, սիրտ պատավէլիս... ձեր ջանին մեռնիմ երէխիք ջան՝ մենք ունիքն ենք, որ թրից վախէնանք, ում զաւակներն ենք՝ որ կրակը մեզ թուլացնի: Մեր ծնողը ու ախպէրները չէին՝ որ էրէկ էնպէս քաջութեամբ մեռան, որ արարած աշխարքը զարմացաւ, ու հուրն յաւիտենական պտի զարմանայր:*)

- « Հանգիստ ու խաղաղ մնաք՝ սիրելիք,
- « Մինչև օրն վերջին, լիսն գեղեցիկ.
- « Անմեղ երեխէք՝ արդար դուք հոգիք:
- « Քանի Ծբարան տեսնեմ, անց կինամ,
- « Քանի շունչո առնեմ, ձեր անունը տամ,
- « Ա՛խ իմ ազգի դուք հրեշտակ սուրբ որդիք,
- « Որ էղակս կանուխ դուք թառամեցիք... » **)

Ո՞ր պատանին, մը երիտասարգին ու օրիորդը չի սիրի այսպիսի հոգեշունչ դրատիարակին: Եւ իրաւամբ «Վէրքը» տպա. գրաւելուց յետոյ՝ դարձաւ հայ պատանիկութեան ամենասիրելի ընթերցանութեան գիրը. շատ անգամ եմ գիտել, որ դպրոցական այն աշակերտները, որ անտարբերութեամբ կարգում են դառնագրի ուրիշ յօդուածները, հէնց որ «Վէրք» ից առնուած հատուածներն են կարդացնել տալիս, թէ և սկզբում սկսում են

*) նոյնը, էջ 176—179

**) նոյնը, էջ 183—184

նոյն անտարբերութեամբ, բայց հետզհետէ, մէկ էլ տեսար ձայ-նըն սկսեց աւելի պարզ հնչել, շեշտել, բացագանչել, աշքերը փոյլել—մէկ խօսքով իսկոյն նկատում ես, որ կարդացածն ազ-դում է նրա սրտի վրայ. նա զգացումն է և այդ բոլորը զգաց-մունքի արտաքին նշաններն են:

Սյդպէս է նոյն իսկ քաղաքացի պատանին, իսկ եթէ կտր-դացողը գաւառացի է (հարկաւ ոչ վիրախօս), այն ժամանակ մը թէ միայն ինքը, կարդացողն է զգացում, այլ ամբողջ դասա-բանը կարծես ելեքտրական զօրութեամբ մի շունչ է դասուում և նրանց աշքերի մէջ կարդում ես նրանց սրտի զգացածները: Քանի անգամ եմ լսել նրանց բացագանչութիւնը՝ թէ ինչո՞ւ շուտ վերջացաւ յօդուածը և թէ ինչո՞ւ շաբունակութիւնը չկալ, իսկ երբ յայտնել եմ նրանց «վէրք չայտուանի» գրքի գոյու-թիւնն և այդ հատուածների այնտեղից վերցրած լինելը, այլ ես հանգիստ ու զարգար չեն տուել ինձ, մինչեւ որ գժուարու-թեամբ գտել և տուել եմ նրանցը՝ կարդալու:

Սյդպէսով «վէրք»ի հեղինակն ու հայ պատանիները փա-խագարձարար սիրում են միմեանց, միմեանցով ոգեսրւում և միմեանց անունով երգւում:

Հայ պատանիները ոգեսրւում են «Վէրքը» կարդալով, ո-րովհետեւ այնտեղ նկարագրուած են տեսնում իրենց հօրն ու Տօր, եղայո ու քոյրերի և նոյն իսկ իրենց ներքին աշխարհը, զգացմունքերը, ուրախութեան ու տիբութեան օրերը, բարի-կենդանն ու ջիրիդը, ուրախութեան հանդէսն ու յուղարկաւորու-թիւնը, ծիծաղն ու լացը, քաջութիւնն ու թուլութիւնը, սարն ու ձորը, աղքիրն ու առուակը, խոտն ու ծաղիկը, սերն ու մածունը և այլն:

Օբովկեանը սիրում է հայ մանուկներին ու պատանիներին, որովհետև զիտակացարար է վերաբերւում իր գործին, զիտէ հայ մանուկների դրութիւնը, նրանց ծնողաց տգիտութիւնը, նախապաշարումը, անկարողութիւնը. նա տեսնում է հայի յե-տամնացութիւնը, եւրոպական ազգերի քաղաքակրթութիւնը և նրա սրտից արիւն է կաթում, որ չի կարողանում հայ մանուկ-ների ցաւերին զարման անել. «Էրէխէքներս չօքան գառած մտն են գալիս, նրանց զարդը չեն քաշում, որ մէկ այրբէն էլա, մէկ ճգի բզի սովորցնեն, հէնց իրանց վիքրըն են բաշում: Էղ-պէս հօ շի ըլիլ.**) » «... Մարդս որ ծնվում ա, մէկ գունդ մսից

* նոյնը, էջ 23

աւելի էլ ոչինչ չենք տեսնում: Տարիք են անց կէնում, որ քիշ քիշ ոտն ա ըլում, քիշ քիշ լեզու, ուշ ու միտք գալիս, ձեռլ բերանը տանելը ու դարդակ հաց ուտիլն էլ ա, հաց դատիլ չեմ ասում, սովորում: Թայց վայ էն էրէխին, վայ էն ազգին, որ աշըք էնպէս գոգում բաց կանի, որ լսի տեղ խաւար կտեսնի: աշըք բաց դուզ ճամփէն կըթողայ, անբնականին կհստակի, որ էնպէս խրատ տուող չի ունենալ, որ նրան հոգի տայ և ոչ հոգին էլ հանի: Երաբ որ լաւ կարդացօղ էլել՝ երեխանց ջոկ, ժողովրդին ջոկ դիշեր ցերեկ խրատ էր տուել, կարդացըել, լուսաւորել էր, հիմիկ մեր ազգը էս հալին կըլէր, էս տեղ կընգնէր: Մարի հայվանն էլ մեզանից լաւ ապրում, հարաժուց, ֆորովանից եա փախչում, հա վրայ թոշում՝ կտրատում, գլուխը պահում. ծտի բունն էլ որ քանդում ենք՝ ջդվժում, թէին գլխին ա անում: Մենք ծտի դդար էլ ա չկմնք, որ մեր բունը պահենք...: **)

Նա համեմատում է հայ սերնդի ժամանակակից դաստիարակութիւնը նոյն իսկ թուրք մանուկների կըթութեան հետ կ վերջինն աւելի գերազանց գտնում. . . Մի գնա մեշտը, ամէն մօլայ էն անհաւատ տեղներով՝ բառասուն, լիսուն, մեծ, պստիկ, գլխին հաւաքել, առաւօտից մինչի մութը ուտումն ա տալիս, իր մասարի բանը սովորեցնում, մերոնք հէնց իրանց քէֆն են արամիշ անում. . . Մեր որդիին էլ մեզ նման էլ ուտում, էլ մենանում չենք զիտում, թէ մենք սովորեցնենք. զիտացողն էլ ականջը կալել ա, ում ասես: Թէ սուտ եմ ասում այ ջամըհաթ՝ մատներդ կոխեցէք, աշըս հանեցէք, թէ չէ ախը մեր ազգը որ խեղ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա՝ որ մեզ մէկ ասող չի ըլում թէ մենք ով ենք, մեր հաւատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք էկել աշխարք. քոռ գալիս ենք, քոռ գնում. . . Տօեդին թուրքն էլ ախը Ղուրանի շատ փայը անգիր զիտի, ես մէկ հայը մեր չեմ զիտում, ախը ի՞նչ իմանամ՝ թէ հոգիս ուր կըթայ, մար իրնս մէր, ախը իմ խեղն էրէխէրն ինձանից ի՞նչ պէտք է սովորին: Թող ինձ կարթացնեն, որդուս ուտումն տան, մեզ ճամփայ շհանց տան. . .: *)

Աբավեանը զիտէ թէ ի՞նչպէս են գաստիարկուում այն սակաւթիւ հայ մանուկները, որոնց բազզը ժպտացել է և մի

**) Նոյնը, էջ 259, 260

* Նոյնը, էջ 39—40

աէքտէրի կամ տիբացուի գոմում չոքած՝ սաղմոս ու աւետարան են անգիր անում. ապարտականը նա ըլի՝ որ ինձ կարթալ չի սովորեցրել, ամա բանը մենակ կարթալումը շին: **) «Աղասու ջիգը հէնց էնդուր վրայ էր շատ անգամ գալիս՝ որ ինչ անում էին, խելքումը չէին նստացնում, թէ բանի զօրութիւն ինչ առ: ***)

Նա պահանջում է, որ գաստիարակը ոչ թէ միայն դատարկ խօսքերով լցնէ երեխաների ու մծերի գլուխը, այլ ինքն անձամբ օրինակ լինի նրանցը՝ իր վարք ու բարքով, նիստ ու կացով. Աւետարանը իրանք են կարթում, ժամ ու պատարագ իրանք անում, մեղ ասում՝ թէ մեր ասածն արէք, մեր գործըն միք նայիլ: Ամբ ի՞նչպէս շընայիմ, հօ քոռ չեմ, փառք Ասածու: Ինչ ճամփով որ զու գնում ես, ես էլ էն ճամփովը պէտք է հետդ գամ, տո զու զուզ գնա, որ ես էլ զուզ զնամ՝ է. զոսի բան չի հօ: Տօ զու խեցգետնի պէս ծուռն էս եռում, ինձանից պահանջում ես՝ թէ ծուռը մի գնար: Առաջ զու արա, յետոյ ինձ խրատ տուր՝ է...: *

Սբովեանի մանկավարժական տեսութիւնները պարզ կերպով ցոյց են տալիս Փան. Ժակ Ռուսոյի սկզբունքների ազգեցութիւնը. Նա չափազանց ովերութեամբ է խօսում բնութեան դաստիարակչական ազգեցութեան վրայ. բնութիւնն աւելի շատ բան է սովորեցնում՝ քան թէ նրա ժամանակակից դաստիարակների, քահանաների խօսքն ու քարոզը. . . ծս էլ զիտեմ, որ Ասածու փիս բան չի սիրիլ, ես որ հող աեղովս ատում եմ, նա ի՞նչպէս կընդունի: Թէ բան ունիս, էն ասա, էտով քարփան չի կտրիլ: . . Քիստոս զիտենայ՝ իմ ծառիցը ու գաշտիցը շատ բան եմ սովորում քանց սրանցից: ***)

Պարժարանում սովորածը նա անուանում է «մեռած բառով», «անհոգի շնչով» «թոյլ լեզուով» սովորած. . . Ա՝ ի՞նչ տեղ են կէնում՝ որ էսպէս շանեն, էս սիրալ շունէնան. վարժատան չէին՝ մհուած բառով, անհոգի շնչով, թոյլ լեզուով լսել՝ թէ չայը էլ գաղ թագաւորութիւն ունէին, որ կամ չհաւատային, կամ քունները վարպետի անսիրտ արամագրութեան վրայ տանէր. Ամէն քար նրանց համար գիրք ա, ամէն ապառաժ նրանց համար պատմութիւն, ամէն հին բերդ, քանզիվ

**) Նոյնը, էջ 24:

***) Նոյնը, էջ 19.

*) Նոյնը էջ 22—23

***) Նոյնը էջ 143—144

մատուռ կամ եղբայրի, որ սպառ ու ձոր լիքն են էս տեղ, նրանց համար կենդանի վարժապետ։ Ամէն գերեզման, ամէն արձան նրանց համար կենդանի վկայ, ու պատմագիր...»։ ***)

* * *

2. Հնկերական սէր:

Ոլքան այժմս, մեր լուսաւորեալ կոչուած ժամանակը, թուլացիլ ու խզուել են ընկերական կապերը և դրանց տեղը բռնել եսամոլութիւնն ու անձնական շահի ամեն բանից գերադասելը, այնքան ևս պարզ ու վսեմ գոյներով է նկարագրուել Արքականն ընկերական սիրոյ արտայայտութիւնները. «...Աղասի ջան, Շղասի, Բ'նչ կըլէր, որ ամէնս էլ քո ուղուրին մատաղ էինք գնացիլ՝ ամսպէր ջան, մեր հնդի, մեր աշբի լիս Արին կապեցիր խալ-խի սիրաց, կրակ վառեցիր երկրի գլխին՝ այ աշխարքի աչք Աղասի: Մ'էկ ճանճ էլ ա նհախ տեղը չես սպանել, մէկ սուը խօսք քո բերնիցը շի դուա էկնել՝ այ Ասածոյ գառ ախտէր՝ ախր ընչի պէտք է Սստուած քեզ էլ, մեզ էլ էս տեղը հասցնէք: Ուր գնանք, ուր մեր գլուխը մը քարի առաջին լաց ըլինք, մը ջուրն ընկնենք, խեղղվենք, պլծնենք: Տօ մէկ բերանդ էլ ա՝ բաց արմ, քո ջանին մեռնենք: Ընչի ես էսպէս մեզ էրում, փոթութում: Բ'նչ կըլի որ էդ սիրուն աշքդ էլ ա, մի բաց անես, մեզ էսպէս չսպանես, շնաւըն էլ ինչ պէտք է մեզ համար, որ քեզ չենք ունենալ: Մեր գլուխը քեզ զուրբան, ամենս էլ առաջ մեր արինը վեր կածենք. կաթն ու ծիծ մէկ տեղ ենք կերել, որ քեզանից ձեռ բաշենք: Բախտ ու լաւ օր մէկ տեղ էնդուր համար ենք վայելիլ, որ քեզ նեղ օրը բաց թողանք: Որիս սուը ես, վեր կաց, քո ձեռովը մատաղ արմ. ով երեսը եղ թեքի, շինքը տուր՝ քո ձեռին զուրբան...:*)

Անձնութեան իրէալն արտայայտող այս խօսքերն տառամ են Ս.Պատուն իր ընկերները, բայց Ազատին էլ իր կողմից յիշ չէ մնում զբանցից. Նա էլ է վառաւում ընկերական սիրով, նա պահան անձնագոհ ընկեր չէ. «Եյ ջիւան, ջիւան տղայ. լաւ իմանում եմ, ինչ թուր ա էկել՝ սրտիդ գէմ առել. ինչ կրակ ա ընկել՝ լիրդդ էրում ու ջիգեաբդ. բայց ինչ անեմ, ընչի՞ չիս սիրտգ եղ բանում, որ մէկ քոյ ցանդ իմանամ, ու էլած կեան.

*** Նոյնը, էջ 22.

*) *Engl.*, § 230

քըս էլ քոյ ուղուրիդ մատաղ անեմ: Ա՞խ՝ լաւ եմ իմանում՝ ա-
զիդ ջան, որ սիրոյ թեր երեսիդ քսվել ա, սիրոյ նետը քեզ էլ
ա դիպել, բայց ընչի՞ շես պարզ ասում, որ գլուխս եղ դնմեմ,
սիրածդ գետնի տակին էլ որ ըլի՛ հանեմ, ձեղ ձեր մուրազին
հասցնեմ, ու ես էլ ձեր ոտի տակին հոգիս տամա: **) «.. Ախ՝
մշքի լիս՝ որ սրտումդ էղպէս դարդ ունիս, հէնց իմանում
ես քար եմ, որ ինձանից բան ես թաքցնում: 2է՝ էնպէս ես
կարծում, թէ էս իմ խորոված ջիգեարը, որ էլ սաղ տեղ չունի,
քո դարդի համար էլ տեղ չի՞ քթնիլ. քո ցաւը չի՞ քաշիլ. էլած չուն-
շըս ու ումբրս քեղ չեմ տալ: Էէնց իմանում էի՛ Աստուածանից
գու բան կթաքցնես, ինձնից չես թաքցնիլ. Էդ ա քո սէրդ ու
սիրտդ: Էէնց իմանում էիր՝ թէ Աղասին էնպէս մեռիլ ա, որ
քեզ համար մէկ մին էլ ա չի՞ քաշիլ, քեզ համար մէկ կաթ ար-
տասուր, էլ ա չունի՞: Էէրնը մէքս զորդ ա՝ մահվան դուռն են
հասել, նշանածս՝ ով ա զիտաւմ՝ հողի տակին ա թէ երեսին,
ամա քանի նրանց ձեռոս չի հասել, երբ կթողամ՝ ձեր մէկի
աշըը ցաւի, ձեր մէկի մազը թերվի: Մինչեւ ես մեռնիմ ոչ, մին-
չև ինձ թիքայ թիքայ չանեն, ձեղ կթողամ, որ մէկ զուշ անց
կենայ գլխներիդ վրայ... Հազար սար ու ծով մեր մէջն ըլի՛,
էլի կթոչիմ, նրան կհանեմ, կրերեմ, թաք ըլի՛ դու դարդ չտ-
նես, երեսիդ մեռնիմ...»: *)

Հնկերական սիրոյ արտայայտութեան ամենասրատաշարժ, ամենազգայուն և ամենավսեմ նկարագիրն է՝ Աղասու ընկեր Մօսիի ասա ծխօսքերը՝ Սղասու դադաղի ետեկից, «Պղասի ջան, Աղասի՝ աշքիս լիսը վաղուց ա խաւարել, որ մէկ երեսդ էլայ տեսնեմ, ոտներիս ջղերը վաղուց են փէտացել, որ վրէդ էլայ մի կանգնեմ, սուր անեմ. ձեռներս քօթուկի պէս գօշիս են կպել, որ մէկ նաշդ էլայ խտտեմ, որ մէկ երեսիդ վրայ ընկնիմ, երեսդ երեսիս տամ, հոգիս հոգուդ հետ ճամբու գցեմ, էդ լիս երեսիդ զուրբան՝ Աղասի, էդ ջիւան ջանիդ մեռնիմ՝ թագաւոր Աղասի; Է՛դպէս էիր ուղում քո խեղճ հօր հաւարին հասնիս, Էղպէս էիր ուղում քո գօստ բարեկամի սիրտն առնիս, Էղպէս էիր ուղում Անի շինես, ումբրդ ու արեդ խաւարացնես, որ բալքի քո ազդին ու աշխարքին մէկ ճար անես՝ այ քո հրեշտակ ջանին զուրբան: Ա՛խ՝ մկամ երկիրը

** Էջ Նոյնը, 376

* նոյնը, էջ 237



քեզ պէս ծնունդ ունի, քեզ պէս զաւակ բերել ա, որ էղպէս անջիգեար քեզ տանում ա. մկամ երկինքը քեզ պէս հողեղէն տեսել, ստեղծել ա, որ քեզ խօսւմ ա. մկամ չայոց ազգը քեզ պէս որդի, քեզ պէս ճրագ էլ ունի, որ քեզ բերել ա հողը զնի, քեզանից ձեռք վերցնի, քո ջիւան ջանը գետնին, գերեզմանին պահ տայ, էդ երկնքի նման լուսեղէն պատկերիդ մեռնիմ Աղասի: Լուսուայ սարերը քեզ պահեցին, քեզ սիրեցին. Անու խարաբէքը քեզ զվաթ տվին, հարամուց ազատեցին. բաս հէնց վամբանն էր քոռացել, վամբանն էր խարաբ էլել, որ խորդ մօր պէս՝ իրան զլուխը պրծացրեց, քեզ մահու տուեց, քեզ՝ որ հազար տարի անց կէնայ՝ էլ քեզ նման զաւակ ոչ ունեցել ա, ոչ կունէնայ: Հինգ տարի բոլոր՝ զու էիր մեր զաշտերի, սարերի Սատուածը. հազար գերի և անճար քո՛ ձեռիցը իրանց կեանքը նորէն ստացան: Բաս էնքան սիրտ էլայ շունէք քո աշխարքը, որ մէկ սհաթ էլայ քեզ պահէր, քո արել էղպէս շուտով շթողար մէր մտնի: Աշերս չասան-խանը հանել տուեց, ոտու ձեռու նրան դուրբան էլան՝ Աղասի ջան. երկինք ու երկիր ինձ համար յալիտեան խաւարեցան, ջան ու զօրութիւն վաղուց ինձանից ձեռք վերցրին, արեգակ ու լուսին վաղուց ինձ համար մէր մտան. ծնող, ազգական գեռ շնմ անսել, որ սիրտս չերվիր, բայց էլած շունչս էլ քեզ համար էի պահում. բառացած ականջներս քո՛ ձէնին էին հասրաթ մնացել, խաւարած սիրտս քո անունովն էր պայծառանում, միխթարւում, քո անուշ ձէնին էի մնում որ մէկ լսեմ, յետոյ հոգիս տամ. քո լուսեղէն պատկերին էի կարօտ՝ որ մէկ գայիր՝ էն խաւար զնանին լիս տայիր, սրտեղ ինձ պահ զնէին, էն սառը գերեզմանին շունչ տայիր, որ ինձ պտի ծածկէր, էն տեսնող լսողին էր էիր, որ իմանայինթէ դու՝ զու ես ինձ վրայ սուր անում քո արեին մատաղ: Հմիկ ալ՝ ինչ կի երկնքիցը մէկ կրակ ընկնի զլխիս ինձ էրի, փոթոթի կամ երկիրը պատովի՞ինձ ներքե տանի ախնա պէտքէ քո սուրն անեմ որ աշք էլ շունիմ, ես պէտքէ քո վրէզ գամ, որ շնմ էլ տեսնում հողը պաի ըլի քո գերեզմանը, թէ սիրտս. մարդիկ են մէնակ վրէզ լալիս, թէ սար ու ձոր էլ. գիշե՞ր ա՛ որ քեզ թաղում են, թէ ցերեկ. արեգակն ա աշքը բռնել, խաւարել, թէ լուսինը. հրեշտակը են քեզ շրջապատել, քեզ ողբում, թէ մարդիկ. երկնքումն եմ քեզ հատ, թէ երկրումս, էդ սիրուն ջանիդ մեռնեմ. Աղասի: Հերն ու մէրդ առաջիս կանգնել՝ խնդրում են, հրմգում

են, քեզ կանչում, թագ ու պսակ, լիս ու ծաղիկ քեզ վրայ են վէր գալիս, քեզ պէտքէ է զարդարեն. թագաւոր ու նահատակ քո առաջն են եկել. բոլորը տեսնում եմ, բոլորի միշտումն զու ես արեգակի պէս փայլում. բաս էս ինչ տխուր ձէն ա, որ ականջս ա ընկնում, բաս էս ինչ կոծ, կակիծ ա, որ վեր ա ըլում, բաս ուր ա նազլուիդ, ուր քո ջիւան երեխէդ, որ թողել՝ գնում ես, չես հարցնում, բաս էս ինչ քարեր են, որ չոքած տեղս, ծնկներս ջարդում, մաշում են. չէ, վայիս վլխիս, արեկիս, զու ես երկնքումը, ես, ես ողորմելիս միայն հրկրումը, էս փուչ աշխարդումը, էս խտար տարտարոսումը, էս փշալից ձորումը. ես առանց քեզ, Մօսին ու ոչ Աղասին, մարմինն, ու ոչ հոգին, լաշը գարդակ, բայց ուր հրեշտակն: Քեզ հետ կեանք բաշեցի, առանց քեզ թնդ չըլի, քո կողքին արևս բաց էլաւ, իմ առաջին քոնը մէր մտաւ. էս շունչը կրակ կըդառնայ ինձ էիրի, էս հողը դժուխը կդառնայ ինձ կմաշի, էս մարմինը որ ինձ պէտքը չի, քեզ թող քեզ դուրբան ըլի, քեզ. ինձ ուր ես թողում զու գնում, ինձ ուր ես թողում զու թըրշում. երկիրն մէկ տեղ վայելցինը, օրօրոցում, շօլում զու էիրի իմ կենաց ընկերը, զու իմ սրտիս սիրեկանը, ես քո տղիզ բարեկամը. Մկամ հէրնը մէր՝ որ քեզ լաց չըլէին, ազգական, սիրեկի վրէզ չկանգնեն, բաս քո ջրատար Մօսին, քո պահածորդին՝ քեզ կուղարկի, ինքը կմսիթարվի, քեզ հողին կտայ, որ հետք չի գայ. չէ, չէ էդ սուրբ երեսիկ մեսնիմ, որ էլ չեմ տեսնիլ. զու գնայ արքայութիւնը, ինձ տար դժուխը, տար. Էս աշխարդն էլ չի կարող ինձ պահել, մարմնիս աշքը քեզ չի տեսնում, հոգուս աշքը հօ բաց կըլի, քո ջանին մեռնեմ. թէ երկնքումն էլ քեզ չկարենամ խտակ, գրկել, հետդ խօսալ, մօտդ նստիլ, հրեշտակ տեսնելիս, զիխովզ շրջելիս, զրախտումը նայելիս, լիսն գրէզ գալիս, որ քեզ տեսնեմ քեզ՝ Աղասի ջան՝ սուր խրին սիրտս էլի կինդամ, կրակ վառեն զլխիս՝ էլի կցընծամ, տար քո բարեկամն, թէ չէ՝ ես կգամ, որ եղ չըմնամ...ալ. ..*):

Այս, ընթերցող, ճիշտ որ այս խօսքերը կարող են սարու ձոր կրակ ձգել, մարդու սիրտը կտրտել և արիւնն ու արտասուրը ցամաքացնել. և. Աստուած՝ ով ունի էն լեզուն, որ

պատմի՝ ինչ որ էս տեղ պատահեցաւ։ Սար ու ձոր կը ակը ընկաւ, խալիսի գլխին ջուր՝ մաղկեցաւ, էլ բերան չէր բաց ըլում, աշքն էր իր կրակը վեր ածում, սիրտն՝ էր իր խանչալները փոխում, շունչն էր իր ծուխն ու բոցը քթիցը քուլայ դուս փշում։ Ալամ աշխալք մնաց քարացած՝ կանգնած։ . . .**))

* *

3. ծնողական սէր:

Աղասին, զգայուն սրտի այդ վսեմ տիպաքը, ընկերասէր Աղասին, հարկաւ չէր կարող իր ծնողներին շյարգել, չսիրել և սրբի պէս չպաշտել, իբրև հնապանդ որդի, ծնողաց խօսքը սուրբ էր նրա համար. «...Էն հասակը հասել էր, քսան տարին անց կացել՝ նա դեռ հօրն ու մօր առաջին էնպէս էր, ինչպէս անմեղ գառը.Մէկ օր նշանց խօսքիցը չէր դուս էկել.մէկ օր նրա բերնիցը մէկ թթու խօսք չէր լսված.աչքը նրանց աչքին առնելիս, նա նրանց միտքը իսկոյն իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի. . . .*) »...բայց ինչ կուզէ որ անէր՝ Աղասին իրանց տանն էնպէս էր, ինչպէս մէկ հարսը. . . .**))

- « Երաք ձեր ճտավն մէկ օր էլ կընկնեմ,
- « Երաք ձեր երեսն մէկ էլ կըտեսնիմ,
- « Երաք ծունկ ծնկի տված ձեզ կասեմ,
- « Այ իմ խեղմ ծնողը՝ ձեք ջանին մեռնիմ».

« Էնց այդ սիրուն էլ զոհ է գնում ջրատար Աղասին. Ռուսաց զօրքը մտնում է երեան թէ չէ, Աղասու ծնողասէր սիրալ մի փոքր համբերութիւն չէ ունենում, անմիջապէս մտնում է բերդի զնդանները՝ իր կուրացրած հօրն ազատելու մտքով և հէնց այդտեղ, հօր գրկի մէջ զոհ է գնում պարսիկների վրէժինդիր հոգուն. «... Աջու ձեռը որ չէր տարել, որ հօր գլուխը, էն ձնի պէս սպիտակ մազերը մէկ խտախ, մէկ գօշին կպցնի, որ էնքան տարգան էրված սրտի մուրազն մի տռնի, հովանայ հէնց տեղն ու տեղը ուսուը վեր էին բերել ու կտրած ձեռը մնացել էր հօր գլխատակին, երեսը երեսին ու ձախու ձեռն էնպէս փէտացած, գօշի վրայ ընկած. . . . Հլայ մի մտիկ արէք, տեսէք, հօրն ինչպէս ա խտաել, ոտ էն ծերին նայեցէք, տեսէք՝ աշքը

) նոյնը, էջ 282—283 *) նոյնը, էջ 25, **) նոյնը, էջ 281
****) նոյնը, էջ 216.

ինչպէս ա որդու երեսը բցել ու երկու ձեռով, սիրտ՝ տրաքի, ճակատին խփում. սիրտ՝ էլ չեմ կարում տանել. ով ջիգեաբ ունի, ինքն իմանայ. . . .*)

Ես էլ չեմ կարող խօսք աւելացնել, սիրելի ընթերցող, կհաղորդեմ միայն Աղասու վերջին խօսքերը. «... Վերջին խօսքս էլի էն էր, արի, արի, Աղասի, որդի, հոգի ջան, որ գոները ճռացին ու ջիւան սրտին հօր ձէնը որ շիմացաւ, Ափու ջան՝ զլսովդ ման գամ, դեռ սաղ ես՝ երեսիդ զուրբան, Ափու ջան՝ Ափու ջան ասելը, գժվածի պէս հօր վրայ ընկնիլն ու թուր ու խանչալ վրայ գալը մէկ էլան. . . .**))

Եթէ որ երիտասարդ, ամուսնացած և որդոց տէր Աղասին այդշափ էր սիրում իր ծնողներին, ապա ո՞րշափ առաւել և ծնողները պէտք է սիրէին իրենց “թագաւոր” որդուն, որի վրայ էր ամբողջ գիւղի ու իշխանաւորների աշքը, որին օտարներն էլ էին սիրում: Բանտարկուած, անբաղդ հայրը միմիայն նրա համար է ուղղում ապրել, որ մէկ իր որդու ձայնը լսէ. «... Աղասի, որդի, հոգի, քանի մի քանի ինձ մաշես. երկնքումը վաղուց եմ տեսու տեսել՝ այ իմ ջիւան որդի, քանի մի քանի ինձ մաշես, արի, արի՝ երեսիդ մեռնիմ, արի՝ մէկ շունչդ ասնիմ, էլ հօ աշք շունիմ՝ որ քեզ տեսնեմ, էլ հօ ձեռք շունիմ՝ որ քեզ գրկեմ. լեզուս ա մնացել, անկաշօ. թող մէկ էլ ձէնդ լսեմ, որ մօրդ էլայ մէկ խաբար տանեմ. . . .*)

Որդուց և ամուսնուց գրկուած մայրը, ջիւան Աղասու տարաբաղդ մայրը հօ այնպէս է մզկտում, որ կարգացողի սիրտը մաշւում, այրուում է.

« Աղասի ջան Աղասի. գլխովդ վարվան ըլիմ Աղասի. — Ընշի չեմ էս սահթին կրակ դառնում ինձ էրում, ընշի չի լեզուս չորանում, աշքս խաւարում, ընշի չեմ թող դառնում, որ բալքի եթէ քամին բերի, գամ, ստիգ տակին ցրվիմ, սարէսար ընկնիմ, քարեքար, որ իմ երեսը կոխես, որ գեղ որ ման գաս, որ իմ աշքը հանես, որ զեղ որ նստիս, որ ինձ վրայ գլուխդ գնես, որ աեղ որ քուն մտնիս՝ նանն ըմբրիդ մեռնի, իմ թագաւոր, իմ աղայ Աղասի. —

« Տնկած ծառերդ փուշ են զառել ինձ սպանու. պահած ծաղկներդ կրակ են զառել ինձ էրում, խորովում, ման էկած

**) նոյնը, էջ 29. *) նոյնը, էջ 224

տեղերդ աշքիս լոռմը մզրախի պէս ցցվում, սիրտս դուզ ճոթ. ուստի: — Ուր կորչիմ, որ ձէնս օքմին շինանայ. ուր գնամ, որ աշք քո տեսած բաներն էլ շտեսնի, միտքս քո ասած խօսքերն էլ շիշի, շանս քարանայ, որ էլ անունդ շտամ, սիրտս ջուր կտրի որ էլ քս սէրը չզգամ, ումբրս փշանայ, օրս խաւարի. որ երկնիք տակին էլ շասիմ, թէ ես էլ եմ մեր, ես էլ որդի բերի, ինձ էլ մէկ օր աշքալիս տվին. ես էլ մէկ օր որդու. զաւակի արևի ձէնը պէտք ածէի — ես էլ որ աշքս խփէի՝ մէկ բուռը հող դու պէտք է երեսիս քցէիր, իմ նաշը խտտէիր, դու իմ լաշը հողին տայիր, դու վրէս սուր անէիր, գլխիս վրայ կանգնէիր, ու էղ աղիդ, էղ սուրբ բերնովդ ասէիր, — «ոզգիդ լիս դառնայ՝ այ իմ մէր, այ իմ մէր, ինչ կրէիր, որ մէկ էլ աշքդ աշքիս, բերանդ բերնիս առնէր ու յետոյ Աստուած հսկիս տանէր»: —

«Հոգիս խոր է՝ թէ հանեմ, Աստուծուն տամ, սիրտս ձեռիս չի, որ կրակը քցեմ, էրեմ. երկնքին ձեռս չի հասնում, անկաջդ ձէնս չի ընկնում: Հուշ ա գլխավերէս թոշում՝ քո անունն եմ տալիս, շունչս ա բերնիցս դուս գալիս՝ քո հասրաթը ջիգեարս էրում, փոթոթում, աշքիս եմ հուփ տալիս, սիրտս ա տշաքում, բերանս եմ կայնում՝ միտքս ա ցնորում. տունն եմ մտնում պատերն են ինձ դժոխք դառել. դուս եմ գալիս՝ սար ու ձոր սկ օրս լաց ըլում. երկնքին եմ նայում մէկ ձէն չի գալիս, երկրին եմ մտիկ տալիս, մէկ խարար շիմանում: Բարձին եմ գլուխս զնում՝ շունչս ա ինձ խեղդում, քնած թէ դարթուն, դու ես աշքիս առաջին պտիս գալիս:

Այս երկար նամակին ամբողջովին տուաջ բերինք, որովհետեւ մայրական սիրոյ և զգացումների զեղման այնպիսի մի կլա. սիրական նկարագրութիւն է, որի նմանը մեր զրականութեան մէջ չկայ. այս օերանի էն աշքին, որ էսպէս Դուզթ իր օրումը նշ տեսել ա, ոչ էլ կտեսնի: Ելի Աղասին էր, որ դիմացաւ, բայց վայ էն զիմանալուն. հարիր անգամ թուլացաւ, նուազեց, թուղթը դրեց երեսին ու աշքերը խփեց, էլ եղ ջուր ածեցին, եղ բերին»*)

4. Ամուսնական սէր.

Աղասին, զգացմունքների ծով Աղասին, որ այդշափ մըդ. կըտում է իր ծնողների ու մերձաւորների համար, կամծես թէ

*) նոյնը. էջ 220

բոլորովին մոռացել է իր սրտի հատորին, իր աշքի լոյս նազլուին. միթէ նրան աւելի պակաս է սիրում, որ ոչինչ չէ արտայայտում. Ոչ, հազար անգամ ոչ. նա սրտի խորքում այրուում, փոթոթուում է. նրան յիշելիս ծուխը քթիցը դուրս է գալիս, բայց նա արևելցի է, իր ժողովրդի հարազատ զաւակն է, ուստի ամօթ է համարում իր սիրուծ ամուսնու, կնոջ մասին հրապարակաւ խօսել, զգացմունքներ արտայայտել: Նա երբէք նազլու անունն ուրիշների մօտ չէ արտասանում, այլ միմիայն առանձնացած ժամանակը, քարի ծէրին, քարափի գլխին. «... Զատ անգամ մէկ քարի ծէրի նստած, կամ մէկ քարափի գլխի թինկը տփած՝ աշքը ձորին, գետին քցած, գլուխը ձեռին կամ մէկ աղրիւրի զրաղի կտիչի վրայ ընկած՝ թփերի, խոտի, ծաղկի, ջրի հետ խաղալիս, լաց ըլէլիս, էին նրան ոստ բերում: Բազի վախտ որ նազլու չէր ձէն տալիս, եա հօրնըմօր անունը յիշում ու ամի քաշում, սար ու ձոր հետը ձէն էին տալիս մղկատում:*)»:

« Նազլու իմ նազլու աննման նազլուն,

« Սիրաս խորովի՝ անունք յիշելով.

« Նազլու իմ, նազլու, հրաշալի նազլու

« Աղասւ քեզ տայ իր եղին բարով:

« Սարերի դոշին, ձորերի միջին

« Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,

« Երեսիցդ զրկուած, քո սիրով մաշուած,

« Տատրակի նման փշի վրայ նստած:

« Նազլու իմ, նազլու մէկ շունչս ա մնացել,

« Ոսկերբս քքըրվել, աշքս խաւարել.

« Թոն մէկ շունչը առնիմ, յետոյ հողը մտնիմ.

« Թժոփքն էլ տանին, ես հանգիստ կըլիմ:,, **)

Իսկ նազլուն, աննման, հրաշալի նազլուն. ինչ էր այդ վըշտալի կնոջ վիճակը, որին երեկ ամեն հաբս ու աղջիկ երանի էր տալիս, նախանձում, որ Աղասու նման տէր ու տիրական, ապաւէն ունի: Խեղճ, ջրատար նազլուն «կիտաշան մահի հիտ էր կովում», ջիւան նազլուուդ որ քեզ ա ուզում, անունդ տալիս,

*) նոյնը, էջ 215 **) նոյնը. էջ 218—219

թէ աչքը բանում՝ քո սիրովն էր վում, թէ քեզ ա յիշում՝ շունչը բերնումը, հրեշտակն առաջին, ոտը հօղումը, խաչը գլխատակին պատանը ծալած, խունկն ու մոմն հազրած, աշըլ խոր գնացած, բերանը փակված՝ լեզուն չի բռնում, որ անունդ տայ արտասունք չունի՝ սիրտը հովացնի էլ թազաթ չունի՝ որ ինձ էլ չէրի...: ***)

Բայց թողնենք Աղասու մօր այն ասածներն իր հարսի վերաբերմամբ և տեսնենք թէ ինքը մահուան հետ կուուղ նազ լուն ինչ է զգում և գրում իր ըմբռի թագաւոր ջիւան Աղասոն։

Նրանք որ սիրտս հանեմ, էս թղթումը դնեմ, երաք որ բաց անես ու հազար թուր միջումը ցցված տեսնիս, կիմանաս էն ժամանակը թէ նազլուդ, քո ջրատար նազլուդ ինչ ցաւ ա քաշում, ինչ օրումն ա, ինչ հալումն, իմ գլխի տէր, իմ ըմբռի թագաւոր Աղասի։ Ո՞ր սարերն են առաջդ կապել, ո՞ր գետերը ճամփէդ կտրում, ո՞ր ձեւն ա թերցդ բռնում, եղ քաշում այ իմ թագ ու պարծանք, որ էսպէս ինձ կրակում թողել ես, ինձ գժոխըլ դրկում, դու արքայութիւնը վայելում, ինձ սուրը քա շում, դու ձեռներդ լվանում. ինձ դիւանոցը տալիս, դու հրեշտակների միջին արեիդ ձէնն ածում ու երեսդ էլայ չես եղ զարձնում, որ ինձ հողը դնես Աղասի ջան, Աղասի, երաք սիրտդ քար ա գառել, երաք աչքդ ծաղիկ ու թուփ էլ չի տես նում, երաք երեսդ մի երկնքին չես քցում, որ տեսնիս թէ ինչ մըրած ամպեր են առաջիդ կանգնած, ինչ կրակ է վերեիցը վեր թափում. չես իմանում միթէ անիրաւ, անջիգեար՝ թէ էս կրակն ու էս բոցը, էս ծուխն ու էս ամպը իմ բերնիցն են դուս գալիս, իմ սիրտս ա քուլայ քուլայ իրանից հանում, վերեն աստղերը խաւարացնում, բանում, ներքել սար ու ձոր պապանձացնում, անձող շինում։

«Հազիր անգամ գերեզմանի դուռը հասել՝ էլ եղ եղ եմ էկել, հարիր անգամ արեգակը որ մէր մտաւ, ես էլ իմ հոգիս հետը ճամփու քցեցի, ու մի էլի ծէգը բացվէլիս. հէնց իմանում էի հողումն եմ, չէի ուղում շունչ քաշեմ, հէնց իմանում էի, մեռելների կուսքին եմ, չէի կամէնում, գլուխս բարձրացնեմ։ ու էլք մօրդ, ալի քո ումբը խաւարած մօրդ ձէնն որ ականջս չէր ընկնում. էլ եղ աչքս բաց էի անում, մազերս նրա ***)

*** նոյնը էջ 224.

ոտի տակին փուում, որ կամ ինձ սպանիս կամ թէ չէ մահի ձեռիցը չվլի, ինձ սաղ սաղ էսպէս չէրի, չսորովի. ամա էլի որ նրա էն խաւարած աշերը էն չօրացած, մաղ դառած ջանը որ աշքովս էր ընկնում, որ իմանում էի՝ թէ նա էլ քո ցաւն ա քաշում, քո գարդովն ա էնպէս փոթոթվում, քո քո ջանին մեռնիմ, միաք էի անում, որ թէ ես էլ մեռնիմ, էլ նրան աշխարքումը պահող չի ըլլի, որ ես կորչիմ, նա էլ կենդանի հետո պէտք է հողը մտնի, կամ ջուրն ընկնի, խեղդվի, որ միտք էի անում, թէ նրա խորսված սիրտը ինձանով ա մի քիչ հովութիւն գտնում, քո կարօտը. քո հոտն ու համը քիչ թէ շատ ինձանից ա նա առնում, ինձ որ չունենայ, կամ սովը պէտք է նրան սպանի, կամ քարէքար ընկնի, մէկ բւռու հողի, մէկ օրհնած տեղի էլ հասրաթ մնայ:

Ի՞նչ ասեմ, ինչ աւելացնեմ այս կսկծալի խօսքերին, սիրելի ընթերցող. զատողութիւններ չեն, որ քննադատութեան ենթաքեմ, լոկ ֆրազներ չեն, որ կիծ քաշեմ վրան, գրքերից հանուած տողեր չեն, որ աղբեւկները ցոյց տամ, ուրիշների թելազրութեամբ և ազգեցութեամբ չեն գրուած, որ պատճառ ները բացատրեմ... Սրանք սրտի խօսքերից բլիսած գանա շունչ զգացումներ են և կարող են զարձեալ միմիայն սրտի խորքերով ըմբռնուել։ Իրաւ որ քար ըլէր, էս խօսքերը կըպատուիր, ուր մեաց մարդ, էն էլ Աղասին, որ սիրտը լարակել, փոշի էր դառելու։: ***)

«Գարունքը բացվել ա, դաշտեր կանաշել,
« ծառերը ծաղկել, սարեր զարդարել.
« թրիւլն իր վարդի սիրովն կշտոցել.
« չէնց ես ան, սիրոյդ կարօտ մնացել:

« ինչ քար տեսնում եմ գու ես առաջիս,
« ինչ խոտ կոխում եմ գու միտս զալիս.
« Սղբրի ջուրն էլ՝ քո համն ա տալիս,
« չանդի ծաղիկն էլ՝ իմ օրը լալիս:

« էղ սուրբ երեսդ մէկ էլ ես տեսնեմ.
« Մէկ էլ մօտիզ նստիմ, մէկ ճտովդ ընկնեմ.
« Թող էն ժամանակն ես տամ իմ հոգին.
« Մեռնիմ արեիդ էղ ոտիզ տակին:
« նազլվիդ աշքը ճամփին մի թողար...: ***)

* նոյնը, էջ 230 **նոյնը էջ 229.

**

5. Սէր դէպի քնութիւնը

Ինչպէս մի փոքր առաջ նկատեցինք, Ծբովեանը Ռուսոյի սկզբունքներին ենթարկուելով՝ չափազանցութեան է հասցնում բնութեան գաստիարակութեան և զօրութեան ազդեցութիւնը. Հեղինակն ինքը բնութեամբ հրճուելով՝ իր հերոսին էլ այդպիսի զգացմանքներ է ներշնչում. «..Հանդն էր դուս գալիս՝ իր մասին ու պտուղը, դաշտերի ծառն ու ծաղիկը, երկնքի պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը տեսնելիս, նրա հոգին վերանում էր, խելքը թոշում, շատ անգամ աշքերը ծով դառձած տեղն ու տեղը մնում կանգնած. հէնց իմանում էր՝ թէ իրան դրախտը տարան:... թէ ասեմ երկիրն ա մէնակ գեղեցիկ, հազար ժաղիկներով, բուսով զարդարած, բաս երկինքը ուր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանդիս պտուղը հասցնում. գիշերը մութն իմ աշքից հեռացնում ու էնպէս շագրի պէս գլխիս վրայ կանգնած անձրե, արև տալիս, որ ես ապրեմ, որդիքս պահպանեմ, աշխարքի պէտքը գամ՝ որ մեռնէլիս էլ գան հողիս վրայ, ինձ մէկ դարդակ ողորմի ասեն:.. Աշքս մոլորուած էս թփից էն թուփ, էս սարից էն սարն ա ընկնում՝ ծառի տակին ասես, սարի գլխին ասես՝ մտիկ անելով աշքս շազում, զուր ա կտրում: հէնց գիտես մէկ ձէն, մէկ թե, մէկ աներեսոյթ հոգի, տերեները խշալիս, զուր թոչէլիս, աղքիւրը քշշալիս, բլբիւր երգելիս, հովը փշելիս, շաղը երեսի թափելիս, ամպը գոռալիս, անձրեց գալիս, ինձ ձէն ըլի տալիս, ինձ ձեռով ըլի անում, ինձ վրայ խնդում, թէ վայելիր էստոնք՝ հողածին մարդ, բարի կաց, բարութիւն արա, Արարշիդ մեծութիւնն ու խնամքը ճանաչիր, ծառի պէս պտուղ տուր, ծաղկի պէս հոտ, սարի պէս աղբիւր, դաշտի պէս մասիր, երկրի պէս հաց, երկնքի պէս լիս...»: *)

Նոյն խսկ գերի տարուած հայ աղջիկներն ու պատանիները չեն մոռանում իրենց սիրելի հայրենիքի բնութիւնը և իրենց աղէկտուր ողբին կցում են նաև հետևեալ խօսքելը. «Թարոնվ մնաք դուք լիրինք, հոդ, աշխարհ, բարով կացէր դուք՝ ծառք, ու ձորք, անտառ: Մենք չենք արժան ձեր սուրբ երեսին, մեր ոտն անիրաւ դիպաւ ձեր գոշին: Քանիցս ձեր պտուղն, * նոյնը, էջ 19—20.

ձեր համն ու հոտը, ձեր շվաքի տակին՝ ձեր ժաղիկն, խոտը մենք հարամ ձեռով քաղեցինք, առանք: Կոխեցինք ձեր սուրբ երեսն ու գոշը. ձեր ղաղըն ու խաթըրը մենք բնաւ չիմացանք: Աղբը գլխին, առվի զրաղին, սիրելեաց միջին, ծնողաց գոգին՝ սէր վայելցինք, մեր օրն անց կացընք: Աստղերն մեր գլխին քաղցը ժիծաղեցին, լուսին, արեգակ իրանց լիսը տվին, թըլունք երգելով, ժաղիկը հոտ տալով՝ մեղքնացըն, զարթեցըն. բայց այս՝ անիրաւ մեր ձեռն, երեսը քնով ժածկեցինք, ձեղ մտիկ չարինք: Քո սուրբ հողին՝ մեր քաղցը հայրենիք՝ ծունք շրբինք մենք. չպաշտեցինք, սիրուն վաթանին մենք կեանք չտվինք, մեղ մատաղ չարինք, մենք չսիրեցինք... Մնացէք բարով՝ հողեր ու դաշտեր. այս, թող վայելին ձեր սէրն ուրիշներ. Վարդանի աշքը, էս մանկանց ոտքը էլ ձեզ չեն տեսնիլ, ձեր վրէն շրջիլ, ձեր հոտովն զմայլիլ, ձեր գրկովն փարպիլ... կըլի՝ որ դուք մէկ էլ եղ հոտ տալիս, զարունքը գալիս; դաշտերն ժաղկելիս՝ մեր երեսին էլ ժաղիկը, կանաչիք, մեր հողիցն էլ զուր գուրս գաք, զարդարվիք, ձեր ցողն մեղ վրայ թափէք, հովացնէք, ձեր հովն մեր գոշին վչէք, զովացնէք, ձեր պարզ զրի հետ մեր արինը խառնէք. մեր տված շունչը առնիք ու պահէք, ձեր քաղցը հոտի հետ երկինքն ուղարկէք: Ա՝ թէ մէկ ճամփորթ էս կողմովն անցնի, ձեր միջին վեր գայ ու էս տեղ քնի, ձեր հոտն առնելիս, ձեր ջուրը խմելիս՝ բալը թէ հոգին իմանայ, ասի, միտքը բերի, թէ էս էն դաշտերն են, որ էս օր մեր չար թշնամու ծառէն ուզում ա, որ մեղ խաչին մատաղ տայ, մեր ջանը խլի, մեղ անի դիմայ. Ի՞նչ կըլէք, ա՝ սի, որ մէկ օրհնած հողում, մեր ազգ ու տակի, սիրելեաց միջումն մեր հոգին տայինք, նրանց խառնվէինք: *)

Հայ գիւղացոց «օքէքը» կամ եայլաները նկարագրելով հեղինակը գարձեալ հիանում է օքանչելի բնութեամբ. «Ծզիւրների գլխին, ժաղիկների վրայ օքէքը իրանց չաղըները տվին ու մալն արին էն անմահական զրախտը: Առաւօտը որ տեղիցդ վեր էիր կէնում, հազար սարի ծէրից ամպն ու ծուխը իրաը հետ խառը երկինքն էին վերանում և շաղն ու ցողը անձրեսի հետ նրանց չորերի, երեսների վրայ դնում:... Մէկ տան պէս, ում օքէն մանէիր, թուշ էլ որ վարդի պէս փայլում էր, աշք

Եր որ մարդի խելք տանում էր, էն օդի ու ջրի, էն ծաղկի ու կանաչի հոտեն ու համն առնեղի հոգին ու ռանդն ինչ կըլէր բաս... աղբըների քշչոցը, ջըների խշոցը, ծառերի սլոցը, զերի ծլվոցը, չօբանի թութակը, զառան, ոչխարի ու տաւարի ձէնն ու բառանչը, ամէն մարդի ուզում էին ասեն. թէ դրախտ ես կամենում, էս տեղ կաց, էսպէս կաց, սիրտ անմեղ, միտքդ յիստակ..^{ո.})

Սրովեանն ինքը բնութեան ազատ ծոցում ծնուելով և ապա երկար ժամանակ հեռանալով իր ծննդավայրից, բնական է, որ վառ պահէր իր սրտում գեղատեսիլ բնութեան յիշատակները և այն, ինչ որ սկզբում վայելել էր անգիտակցարար, յետոյ գիտութեանց և գեղարուեստի ճաշակն առնելով աւելի ևս պիտի հրճուէր և բանաստեղծօրէն արտայատէր.

« Բարով մնաք, բարնվ, սարել ու ձորեր,
« Ալվան ծաղկներ, սիրուն աղբըներ,
« Որ ինձ պահնեցիք գուք էօքան օրեր,
« Այ անմեղ չայեր՝ սիրուն աղջկներ:

« Ազախն բալքի ձեզ էլ չի տեսնի,
« Ազասին ձեզ վրայ կըլի էլ չքնի,
« Ձեր հոտը չարնի, ձեզ կշտովն չանցնի,
« Ձեր ձէնը չսի, ձեզ կարօտ մեռնի:

«.. Միրնև աղբըներ, լաջմարդ ծաղկըներ..
«.. Մնաք բարնվ սարեր, էլ ձեզ տեսնիլ չնմ:^{ո.}^{**})
6. Կրօնական զգացումն:

Սրովեանն իբրե նախկին հոգեռական և հոգեոր կրթութիւն ստացած անձն, թէն ջերմեռանդ քրիստոնեայ է, բայց պէտք է ասել, որ բաւականին ազատ քննութեան է հնթարկում իր կրօնական զգացումները և Քորպուտի ազդեցութիւնը բաւականաշափ աշքի է ընկնում. եկեղեցի գնալը, աղօթելը, ծունկ չոքելը, խոստովանութիւնը և այլն, բոլորն էլ որոշ բացատրութիւններ են ստանում «Ալէրը»-ում. «Ժամ որ գնում ենք հէնց իմանում ենք թէ էնայ ամէն բանից պրծանք, պարտքներս ավինք, որ մէկ քանի խաչ հանկցինք էքեսներիս, մէկ քանի ծունդը գրինք, պատարագի էրես տէսանք, պատներս բաց արինք, սրբութիւն արանք: Ինչ ասում են, մեղ համար

^{*)} նոյնը. էջ 240—241. ^{**) նոյնը էջ 75—76.}

մեռած ա, մեղ չի ազդում, չունքի մեր սրտի բառը չի, մեր լեզվի խօսքը. ուրիշներն ասում են, մենք էլ ականջներս կախ արած, աշքներս ցցած, լսենք, լսենք, տեսնենք, շտեսնենք, երբ ա մեր սիրտը մէկ օր վառվում, որ իմանանք թէ էս ինչ հրաշք ա, որ Աստուած ամենաբարին մեղ համար ստեղծել ա, մենք ինչ ենք, որ մեր առած գոհութիւնը, փառաբանութիւնը, ծունը, երկրպագութիւնը՝ Ասածու սուրբ առաջին ինչ ըլի: Պէտք է մտածենք ով ա աղքատ, որ նրան օգնենք, ով ա հիւանդ, որ նրան մխիթարենք, ում են զրկում, գնանք նրան թափենք, ում սիրտը նեղացրինք, գնանք էլ նդ հաշտվենք...^{ո.}^{*)} «.. Հանդր գուս զալիս մեր բիրդ Աղասին էսպէս էր մտածում ու սիրտն էրգում, ժամիցը գալիս, փառք էր տալիս Աստուծոյ՝ որ շուտ արձակվեցաւ, ինքը տուն էկաւ, որ մի քիչ զինջանայ, ու գնայ հանդր որ էլի սիրտը բացվի, էլի էն հիւանլի ձէնը լոի ու իր բանն անին: ^{**) ») «Ճատ անգամ բարկացած գալիս էր, տան պուճախումը, կամ քուրսու տակին ոտները փռում, տըրտընջում, թոնթորում, գանգատ անում, որ ժամումը խոստու վանելիս՝ էնայ բանդը որ էլի սիրտը բացվի, էլի էն հիւանլի ձէնը լոի ու իր բանն անին: ^{**) ») «Ալպէր արածիս հայ մէկ ճար արմ, յետոյ ուրիշ բաներից հարցրու: Է ասում էր շատ անգամ, նեղանա. լով. չէնց բանի ասում ես, էլի երկու սհաթ շրացնում, գլուխդ տանում են թէ ասա, ասա: Ասիր որ շեմ արել, ինչ ասեմ ինչ: Էնպէս բան արա, որ սիրտս քիչ հովանայ, ես տաքանայ, շատ խօսալուց ինչ կշահվիս: Ասենք թէ խաթը եմ անում, իս շեմ ընկնում, հէնց պէտքէ ամէն բան բերանդ գալիս խօսիս: Սիրտս սրսուում ա, էղ հարցրած բաներիցդ, քար ըլի, էղ խօսքերը չի տանիր. Սիր ինչպէս են Աստուծոյ Սուրբ տաճարումը էնպէս բաներից խարար առնում: Սյն չոլումը չէ պէտքէ խօսացած, բալքի թէ քամին իմանայ, տանի ուրիշի անկաջը ցցի տանը չի պէտքէ ասած, որ շիմ չիմանամ պատերը զարգանդին: Ես իմ կարճ խելքովս էնպէս եմ իմանում, որ մարդ խոստովանելիս, ինքը պէտքէ իր մեղքի վատութիւնը, իր արած չսրութիւնը միտք անի, փոշմանի, զղայ, Աստծուն խնդրի որ իրան թողութիւն տայ, որ էլ չանի, կարողութիւն տայ, որ իմ ճամ փիցը չհեռանայ, բարի ըլի, թէ չէ զու անելով, մարդի վրայ ^{*)} նոյնը էջ 21. ^{**) նոյնը էջ 21. ^{***) էջ 21—22.}}}}

բեռը դնելով, անկաջը էսպէս բաներով լցնելով՝ սրտինը ոչինչ խարար չառնելով, ինչ կընդնի մարդի ձեռքը. ոչինչ... Առաւոտը գնում եմ հանդը, ըիգունը գալիս, մէկ մարդու ծուռը աշքով չեմ մտիք տալիս, էլ մեղքս ո՞րն ա, որ զիներս տանում են, թէ հա ասմա: Ես լաւ գիտեմ, մեղքի պարկն ո՞վ ա, իրանցից պէտքէ հէսար պահանջել, մեղ վրայ են բեռը բարձում, մեղ մեղաւոր շինում...*)

«Ախ՝ խաչ զօրաւոր քո հրաշքիդ զուրբան. մինչև երբ մեր ազգն, աշխարհն չայկական էսպէս կտանձվի, էսպէս կմաշվի, էսպէս կքանդվի, էսպէս կխաշվի: Խաչ քեզ պաշտողին ինչի՞ չես պահում, Խաչ քեզ բռնողին ընչի՞ սպանում, քեզ անարգողին էսպէս զվաթ տալիս, քեզ պարսաւողի սիրտը ոչ խրվես. Ախ՝ տէր իմ Ծստուած, թէ մենք առաջիդ մեղաւոր էինք, քո պատուիրանիդ չհնազանդեցաք, անիրաւ էինք մեզ սպանէիր, ընչի՞ մեզ թողիր մեր խեղճ ծնողացը թրի տակ տվիր, մեզ կրակ տվին, ընչի՞ չերեցիր, թողիր, որ էսպէս տանջվենք շաբաշար, անհէր ու անտէր, անմէր, անհաւար մնանք էս չօլումն, գաղանաց միջումն, մեր լաշը թոշնոց, մեր արինը հողին մատաղ տանք, մեր ջանն ոնենք էս գետին...**)»

Միւս կողմից երբ Սրովեանը համեմատում է մեր կը օնը մահմեղականութեան հետ, հետեւալ եղրակացութեան է գալիս. «. Մեր սուրբ լեզուն պէտքէ հարամ լեղվի հետ փոխենք, մեր սուրբ պատարացն ու ժամը թողանք, աղանի ձէնին անկաջ դնենք. մեր սուրբ մեռոնը մոռանանք, մեր խաչ, աւետարանը մտքից հանենք, Սլուն, զուռանին հետեւինք: Մտիկ արէք սրանց էս դժոխք, ժանգ, մրբած, կեխտութ երեսին. զըժոխքը սրանից լաւ կըլիք. սրանց աշքերիցը կրմկ չի վեր թափում: Վայ մեր զիլին ու արևին, էնքան պէտքէ խղճանանք, որ մեր հօրնը մօրը սպանողներին, մեր ժամն ու աշխարքը քանդողներին նօքար դառնանք: Ախ թէ էս փուչ փառքիցը խարվինք, էս անպիտան պատժիցը վախէնանք, ու մեր սուրբ հաւատն ուրանանք, որ մեռնինք, ինչ երեսով պէտքէ զնանք մեր ծնողաց մօտը. ինչ աշքով պէտքէ նրանց նայենք: 2է, չէ. մեռնինք միասին, երթանք միասին...**)»

*) նոյնը էջ 181. **) նոյնը էջ 179.

* *

7. Սիրոյ զգացումն:

«Վէրքոի մէջ թէկ զուտ սիրոյ զգացման լնդարձակ տեղ չէ տրուած, բայց մի քանի հատ ու կտոր նկարագրութիւնները բանաստեղծական են և բուն չայկական: Սէրը հարկաւ ամէն տեղ և ամէն ազգի համար էլ միննոյն զգացումն է, բայց այդ զգացման արտայալը թեան ձեր տարբեր է և այդ տեսակէտից է ահա, որ մենք «Վէրքո» մէջ նկարագրուած սիրոյ զգացումը գրուն հայկական:՝ ենք անուանում:

«.. Թոյն էկել՝ շիշակացել էր, չինարի գառել. բեղերն նոր էր բերնի վրայ ծաղկել. թուխ թուխ ճալվերը շարմաղ երեսին հովին անէլիս՝ հէնց իմանաս հրեշտակ ըլի թեով խփում: Տասնըվեց տարին անց կացել դեռ նա ծուռն աշքով մէկի երեսի չէր մտիկ արել: Բազի վախտ մէկ քող կամ սպիտակ լաշակ տեսնէլիս դորդ ա, խելքը զիլիցը գնում, սիրտը կրակով լցում, աշքերը արտասուրը կոխում, ուզում էր սար ու ձոր ընկնի, գլուխն առնի կօրչի, ամա մէկ քանի օր որ անց էր կէնում, աշքը էլ որ չէր տեսնում, սիրտն էլ հովանում էր: Բազի վախտ էնապէս գիտես: թէ նրան վեր ըլին քաշում, չովը տալիս, ձառը ծաղկելիս, ջուրը քչչալիս, հէնց գիտես թէ մէկ աներեսոյթ ձէն նրան ասում լիի. «Մուսա ջան քնի» ես աշքդ կկպցնեմ, երազումդ հետդ կիսուիմ, որ զարթնիս, գիւմ կլիմ, չունքի վախտը չի հասել՝ որ գու քոյ նասիրը գտնիս. ինչ որ ճակատիդ գրած ա՝ էն պէտք է լիի: Քնից որ վեր էր կենում. հէնց իմանում էր՝ թէ հրեշտակները մօտիցը նոր թուան: Նա չէր իմանում, թէ սէրն ա էս, որ քիչքիչ նրա սրաւումը տեղ էր պատրաստում: Մէկ օր էլ էսպէս մէկ ծառի տակի ընած տեղը երազում մէկ թաս գինի բերին, դէմ արին նրան, ու մէկ հրեշտակի պատկեր նրան՝ թեերն երեսին փռած կամաց ձէն տվեց. «Մուսայ ջան, եա խմիր էս թասը, եա ինձ սպանիր. իմ կեանքս քո ձեռնին ա: Հէքնըմէք չունիմ, ընկելեմ մէկ անօրէն տաճկի ճանկ. Ղարսայ սարումն ա մերօքէն. թէ սիրտ ունիս, թէ նստուածդ սիրում ես, արի, ինձ ազատի. չես ազատի, քո օրումդ գու կեանք չես տեսնիլ. Մուսայ ջան գնում եմ, զու գիտես: արի,

*) նոյնը էջ 232

թէ չս ա քսան օր ա ինձ տպնջում են, որ թուրքանամ, չեմ
թուրքանում, քեզ եմ սպասում. ինձ երազում ասացին, թէ
դու ես իմ ազատողը»

« Աշջը որ բաց արեց, հէնց իմացաւ՝ թէ ծառ, խոտ, ծա-
ղկիկ՝ անմահական հոտով լցված լլին, ու արեգակի շողքը երե
սը սղալելով՝ ու սուրով սարի քամակը անցաւ...» *)

« Բայց մուսի աշքիցը քունն էր փախել, սրտիցը դարարը։
Արեգակն էր զուս գալիս՝ նրա օրը մէր էր մտնում՝ օրն էր մէր
մտնում՝ նրա ցաւերն էին նոր ի նորոյ բացվաւմ։ Սար ու ձօր
նրա համար դժոխք էր զատել. գիշեր ցիրեկ նրա կերած հա-
ցը, նրա խմած ջուրը, նրա տեսած լիսն ու երազը՝ էն սպանչելի
պատկերն էր, որ իրան կանչել էր. ծառերն էին սլսլում, թէ
ջուրը քշքաւմ, քսմին էր փշում, թէ հովը հնչում՝ նա ոչին
ձէն չէր իմանում, ոչինչ չէր տեսնում, եթէ ոչ իր սիրէկանի
երկնային դէմքը» *) ... « Նա տեսնում էր՝ որ ջիւան Մուսին մէկ
աղջկայ ձէն լսելիս, մէկ աղջկայ պատկեր տեսնելիս՝ իրանից
գնում, խելքամաղ էր ըլում, ամա էնակս կարծում էր՝ թէ էս
էն առաջին կրակն ա, որ ամեն ջահել մարդու սիրտ վառում
բորբոքում ա, երբ ինքն իրան ճանաշում ա, երբ արինը եռ ա,
ընկնում, ու սար ու ձոր մարդու աշքին եա սալ ու քեամանչայ
են գառնում, ուշ ու միտքը տանում, եա թուր ու զանակ զառ-
նում, սրտումը ցցվում։ Ջատ անդամ սիրտը բերանն էր գալիս՝
որ իր ցաւերն ասի, ամա լեզուն չորանում էր, պապանձում,
երեսը կարմրատակում, չէր գիդում՝ թէ ինչ ջուղաբ տայ... էլ
հաց ու ջուր միտքը չէր բերում, գլուխն առնում կորչում. սար
ու ձոր պէտք էր ոտնատակ տված որ նրան մէկ տեղ քնած
քթել էին...» **)

Միմիայն Աղասին էր հասկանում Մուսիի գարդը, միայն
նա էր մտածում իր սիրելի ընկերոջ վիշտը փարափելու մասին
«... Ախ լաւ եմ իմանում՝ ազիզ ջան, որ սիրոյ թեր երեսիդ
քավել ա, սիրոյ նետը քեզ էլ ա զիպել, բայց ինչի՞ չես պարզ
ասում, որ գլուխս եղ դնեմ, սիրածդ գետնի տակին էլ որ ըլի
հանեմ, ձեզ ձեր մուրազին հասցնեմ, ու ես էլ ձեր ոտի տա-
կին հոգիս տամ, Մէր ու նշանած գիխս կըակ են ածում, սար
ու ձոր ինձ՝ քիչ ա մնում, ուտեն, մէկ քար չունենք, որ գըլ-
իներս վրէն դնենք, էլի գու՝ նվ սէլ, նվ բնութիւն՝ ուզում ես

*) նոյնը էջ 234. **) նոյնը էջ 234—235

ցոյց տալ քոյ զօրութիւնը։ Սի՞ ո՞ր կորչի մարդ, որ քոյ ձեռի-
ցը պրծնի, քոյ ցաւը չտեսնի։ Սաաջ վառում, բորբոքում են
մեր սիրտը, յետոյ էրում, խորվում. առաջ վարդի հոտով գա-
լիո, մեր սիրտը մտնում, յետոյ փուշ ու սուր դառնում, մեզ
կտրատում» *)

« Հրեշտակ էիր, որ ինձ երկեցար,

« Երկրումն ես ծնվել թէ երկնքիցը եկար.

« Մէկ ջան ունէի, էն էլ գու տարար.

« Այ իմ սուրբ պատկերը՝ արի հոգիս առ:

« Ամպին եմ սրախս գարդերը պատմում,

« Ցրկում գալիս չի, ու քեզ եղ ասում.

« Քար ու սար աշքիս աղի արտասունքն

« Ել եղ սիրտսածում, էլ եղ ինձ էրում։

« Թող մէկ էլ տեսնիմ քոյ սուրբ պատկերը.

« Թող մէկ էլ տայ ինձ բաժակ քոյ ձեռը.

« Մէկ չունչդ առնիմ, ընկնիմ սարերը,

« Քեզ մատաղ անեմ իմ զլուխս, իմ օրը» **)

8. Հայրեննեաց սէլ:

Աբովեանի զգացմանց աշխաբնի. թափն ու պսակը կազ-
մում է նրա մշտամորմոք, թախծալի և ոգկորութեան հասնող
սէրը՝ գէպ իր թշուառ ու կիսակործան հայրենիքը, գէպ իր
անրազդ և ճակատագիր ձեռքից հալածուած ազգը.

« Վայ էն ազգին, որ աշխարքում անտէր ա,

« Վայ էն երկրին, որ թշնամու գերի ա,

« Վայ էն խալխին, որ ինքն իր կեանքն, աշխարքը

« 2ի պահպանիլ, ու հարամու ձեռ կտայ։

« Ով որ սարեր կերթայ իրան ֆորսն անի,

« Ով որ կուզի, աեղը նստած, մուլք դատի,

« Անտէր ազգին նրա գիւլլէն կըդիպչի,

« Անտէր զլուխն նրա քիսէն կլցնի։

« Կատաղած ծովն ինչ կհարցնի լաց, չիւան։

« Նրա ֆրթնէն (ալիքը) ոչ սիբա ունի, ոչ հոգի

*) էջ 236—237. **) նոյնը, էջ 235—236

« Թէ ճար ունիս, մի տար նաւիդ գլուխն իրան.
« Աչք թեքցիր, ծռվի տակին կբացվի:

« Այս արեգակ, բարի հրեշտակ՝ մէր մտի,
« Ի՞նչ ես կանգնել, սիրուն աշքերդ բաց արել.
« Հայի համար որ դուս էլ չդաս դու իսկի,
« Դարդ չի անիլ վաղուց է նրա աստղը թեքվել» *

Աբովեանը յիշում է անցեալը, յիշում է պատմութիւնը, հայ ազգի վլխովն անցածները և հիանում, ոգեորւում է զարձեալ այդ ազգի տոկունութեամբ, դիմացկունութեամբ և համբերատարութեամբ... Հէն օրհնեալ հոգը, ուր Աթուիք, Պարսիկը, Հոնք, Սլանացիք, Մակեդոնացիք, Սրաբը, Օսմանցիք՝ ջրհեղեղի պէս վրայ եկան, հարիւրաւոր ազգ ու աշխար ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին, թրի, կրակի մատաղ արին, ուր տեղ ոսար չի մնացել, որ արին չտեսանի, քար չի մնացել, որ մարդ տակով չանի, ու հարիր մեր հարեան ազգեր էնալէս են հոգի հետ հաւասարվել, կորել, որ էս օր ոչ ոչ նրանց չունչը կայ, ոչ անունը. բայց սուրբ հայոց ազգը, անյաղթելի՝ Հայկայ որդիքը՝ իրանց կեանքը, թագաւորութիւնը, մեծութիւնը, փառքը, իշխանութիւնը, զօրքը կորցնելէն ետե, որ տիսան՝ թէ էս աշխարհակործան ջրհեղեղին, էս գաղան ազգերին, որ սէկը միւսի սուհացը ճոլոլակ սուր օր կամենում էին գնալ, Եւրոպայ, թէ Ասիայ, հայոց հողովը պէտք է անց էին կացել, չեն կարող գիմանալ, աշքըները երկինքը քցեցին, զլխըները գոզըները գրին և հազար թրի տակից, հազար կրակի միջից սիբու սրտի տված, հոգի հոգու կպցրած, մինչեւ էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հաւատը, իրանց սուրբ օրէնքը՝ էն վեհանձնութիւնովը պահպանեցին, որի օրինակը աշխարքում ոչ էլել ա, ոչ կըլի.... Բնի անէր հայոց խեղճ ազգը, որ նոյեան գէսը վեց հազար տարի, ոչ թէ քրիստոնէի կամ լուսաւորեալ ազգի, այլ հեթանոսի, կուապաշտի, մահմէղականի, անօրէնի ձեռին էր աշքը բաց անում, նրանց հետ քեալլա տալիս, ու շատին շատ անգամ իր ոտի տակը քցում, բայց կարող է վարդը ծովի միջումը գամ մանիշակը կրակի առաջին դիմանալ. կարող է զօրանալ, մանիշակը կրակի առաջին դիմանալ. կարող է կակող ցորնի հասկը էն կայծակին ու կտրկախն համբել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել ա, եա զիմացել.

* Նոյն էջ 80, 81

Հայոց ազգ, հայոց աղդ, ձեր ջանին մեռնիմ. հայոց ազգ, քո հողին մատաղ՝ հայոց աշխար էն որ կաթը զուր ծծեցիք, էն որ մէջքը ձեզ բերեց, էն որ ձեռը ձեզ գրկեց. էն որ բերանը ձեզ օրհնեց, որ դուք էս հոգին ունենաք, էս սիրտը ձեր միջու. մը ըլի, էս հրաշը զնուք աշխարքին ցոյց տաք: Էն ինչ աշք պէտք է ըլի, որ քուանայ ձեզ չտեսնի, ձեր զադրը չիմանայ. էն ինչ բերան պէտքէ ըլի, որ կապվի, ձեր փառքը չգովի, ձեր անունը չպաշտի. էն ինչ քարացած սիրտ պէտք է ըլի, որ ձեզ չսիրի, ձեզ իր հոգին մատաղ չտայ.... Դուք, դուք իրար պահեցէք, ինչպէս ձեզ նախնիքը, դուք, իրար թասիր քաշեցէք, ձեզ նախնիքը միտք բերէք, ձեզ հոգն ու ազգը պաշտեցէք, ես եղ եմ դառնում, էլի իմ պատմութիւնն անեմ, բայց աշքս ճամփի ա, ականջս ձէնի, ձեզ ջանին զորբան՝ չթողաք, որ էս մուրազը հետըս գերեզմանս տանիմ ու հոգումն մարմինս քրքրվի, երկնքումը հոգիս տանջվի... » *

« Ոչ Սոսրիր, ոչ պարսիկը, ոչ մակեդոնացիք, ոչ հարվ. մայեցիք, ոչ պարթիք, ոչ մոնղոլը, ոչ օսմանցիք չէին կարող էն զօրութիւնը ստանալ, եթէ հայոց ազգը մէկի գէնը չէր պահել, չէնը պահելով՝ զօրդ ա՝ իր տունը քանդեց, չունքի իր բարեկամը զեր ընկնելուց եզոյ իր թշնամին աւելի ես իր չարութիւնը զործում, իր ինազը (Չիկը) հանում էր. բայց էս տով հայոց ազգը արարած աշխարքին յափառեանս յափառենից կարսդ է համարձակ ցոյց տալ, թէ ինչքան հոգի ունէր, ինչ քան կամաց զօրութիւն, սրտի հաստատութիւն, որ իրան չորս կողմի էն հօր աղգերը կորան, փշացան, անունները չկայ, հայոց ազգը անուն էլ ունի ու իրան հաւատն ու լեզուն մինչեւ էս օր իր արնի գնովը պահեց, հասցընք՝ որ մէկ ազգ էլ ա էս պէս օրինակ չունիր. » **

Նա պատմելով հայերի՝ պարսիկների ձեռքից կրած հալածանքն ու տանջանքը՝ յանցանքի մի մասն էլ հայերի վրայ է ցցում և գանգատւում. « Եսիբելի կարդացող՝ իմ աշքի լոյս հայ էս քո հաւատակիցք, ու հայրենակիցքն են, որ ես ասում եմ, ու էրվում. քեզ հետ մէկ աւազանից ծնվել, քեզ հետ մէկ մեռնով օծվել, մէկ խաչով կնքել, երաբ՝ որ լսում ես, սիրտը ինչ ա ասում, չիզեարդ ինչ: Գիտեմ որ ասում կըլիս մտքումդ՝

*) Նոյնը, էջ 86-87 **) էջ 268-269.

Էնպէս օրը գնայ, ոչ եղ գայ, բո թշնամին էս կրակի մէջը չընկնի: Գիտեմ՝ որ սիբադ էրվում, խորովում կըլի, ու ուզում ես, որ էս անիրաւ ազգի երեսին էլ մտիկ չասես, նրան տեսնէլիս՝ գլուխդ առնես, կորչես, բայց հաւատացիք ինձ՝ մեղաւոքը նրանք չեն, մենք ենք. Մենք որ իբար թասիր քաշենք, իբար պայծառացնենք, չենացնենք. ծովն էլ տեղիցը վեր կինայ, մեզ տակովը չի կարաւ անիլ, ինչ թէ օսմանցին, եա պարսիկը...» *)

«... Բայց վայ ձեզ օրին, ձեր օղուշաղին, թէ դուք կեն դանի կանգնիք՝ ձեր աշքով տեսնիք սիրեհաց տանջանքն՝ մըղկըտալով, ձեռներդ խաչած՝ ձեր զօշը ծհծելով, հող տաք ձեր զլիին, թագէք ձեր որդին, ձեր սիբարը հանողին, կեանքը քանդողին եսիք դառնաք ու էլի չպրծնիք, էլի միշտ տանջվիք ու ձեր հողի վրայ դուք մտապ ըլիք, ձեր աշխարհումը էսպէս դուք մաշվիք ու դիռ սիբար չանէք, դուք չմիաբանիք, մէկ օր էս սութ, թուրն, էս կրակն ու բացը, էս պղինձն, չամբուրն, էս վաս հնոցը դուք ձեր թշնամուն միշտ հաղիք չպահէք, նրան դուք չերէք, նրան չկոտորէք, ձեր ազգն, աշխարքը դուք ազտաշնէք ու էսպէս թշուաս, տարարախտ մնոք .»; **)

Ազասին Անոյ աւերակները տեսնելով՝ հրճւում և մտածում է Անին նորից կենդանացնել, բնակութիւն համատել այդանու. « Մնանք էս սուրբ հոգումը. մեր սուրբ թագաւորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազտանքն զողի, աւազակի ոտքից: Հարըրից աւելի ենք հիմիկ. ինչ ձեռք են բցել, ձեզ ըլի: Մնանք էստեղ. եա մենք էլ մեր արինը մեր սուրբ թագաւորաց հողի վրայ թափինք, եա քիշ քիշ նրանց քաղաքը էլ եղ պայծառացնենք: Տուն կայ, ջուրը բոլ, հանդը, զաշոը մեծ, մէկի տեղեակ հինգ զարմանալի եկեղեցիք. քարի տակիցը ողող կիանին, ձեզ կպահենա: Թայց քրսանցիք անիման անիման այս է լինում. «իմալ կէնին անիծած խողում զով կմնայ: Յայսմաւուքն առւտ իմալ կիսուի: Մեր վիզը զարկես, մեր ջանը խանես, վաղախայ էս չօլում կէցող հմայ մէկն էլ աշեղնի, չեղնի: Խազար տարի խա տսաւ, խա գլուխդ ի քարին զարկի: Մենք չընք կենայ, չընք դինայ, ինչ կասես՝ ասա. Մենք մեր խողը չենք թողայ: » ***)

Մյս խօսքերի վրայ սրտմտած՝ հեղինակը քացականչում է

*) Ասյնը, էջ 94. **) Ասյնը, էջ 182. ***) Էջ 249.

Սղասու բերանով. «Եք թողալ, Սատուած ձեզ հւտ. մեր աստղը մէկ անգամ ծովել ա, մարդն ինքն իր զլուխը որ թրի տակը գնի, էլ ո՞մ բանն ա կտրվել նրան քօմակ անի. Էսպէս արինք՝ որ մեր տունը քանդից՝ է: Գնացէք, Սուասուած բարի ճանապարհ տայ, ու ձեր սիբար մէկ լիս քցի, որ ձեր խէրն ու շառն իմանաք...» *)

Վերջը, ճարը կտրած, թուրք փաշայի օգնութեանն է դիմում. . . արտասուրն աշքերը լիքը՝ կթիին ընկաւ Սղասին փաշի ոտքը. «էս գլուխը, որ ինձ էլ պէտք չի, էս դոշը՝ որ հազար անգամ ուզել ա, իր թուրն իր սիբար խրի՝ բոլոր, բոլոր քեզ մատաղ՝ փաշայ. եա էս սնաթին ինձ սպանիք, եա ասածդ արա, որ ես իմ ազգի մայրաքաղաքը էլի չէն տեսնիմ, եղոյ գետինը մտնեմ: Բայց տաճկանպատակ հայերը դարձեալ պատասխանում ին իրենց աղատողին. «Անխստատ աջամ, ծօ, ինչ կրզը բուցէ, ծօ, զիք չզինայ, կարդալ չզինայ, փաշութիւն կտան հմլայ էլ իր սազ կածէ՛՛ և լոելը իման կորցրել, որ էմալ անիծած անի գայ՝ բուն դնէ՛՛ հիսակ Սջամ, Ծջամի լաճ. ինչ կուզես էրէ, ազլոր մագլոր չի խարցնիլ, հմլայ կրոսայ, մեր ձև խանչեց (մեր ազլոր կանչեց)...»: «... Ըի քաշելով, աչքը սրբելով՝ Աղասին Անին թողեց... էլի որ գեռ Անու պարիսպքը, եկեղեցիքը աշքին երեսում էին, սիբար մի քիչ հանդարտում էր. զօշին խփում էր, ան քաշում, կրակ վեր ածում: Հենց սարի գլուխը վեր էլան, որ էն կողմն անցնեն ու Անին պէտք է անիրեռ թանար, էլ չկարաց իրան պահիլ, թուրացաւ. ձիուց վեր ընկաւ, չօքեց, ձեռները երկինքը քացեց, աշքերը Անու վրայ ու գոռաց. եա մու իմ սիբար, եա անը ինձ հունար, ով ինձ հունար, ով դու երկնային ստեղծող բարերաբ, եա իմ հոգին էլ հանիք, քիզ մօտ տար, եա քո երկներից արա ինձ մէկ ճար:

« Քանի շունչս վրէս ա, քանի ձեռքս գլուխս,
« Կրակ էլ որ թափես, խորովես իմ սիբար,
« Էլի իմ հոգիս ուրախ քեզ կտամ,
« Թէ Անու միջումն իմ մարմինս թողամ:

« Աշքեր՝ քոսագէք, բալքի թէ էլ բաց
« 2տեսնիք դուք Անու լուսահողն օրհնած,
« Բալքի թէ մեսնիմ էս զարդովն էրված,
« Հողս էլ ա հողին շմնայ կորած... » **)

*) Ասյնը, էջ 249. **) Ասյնը, էջ 262—263.

Աբովեանը յաճախ իր պատմութեան կապակցութիւնը թողնելով՝ շեղում է նիւթից. ոգեսրում և մէկ տեղ էլ ինքն իրեն բացազանչում. « Բայց վայ ինձ հոր հասայ, ուր տարաւ ինձ իմ կոկիծ, իմ էրված սիրու. Լեզու շի, որ խօսում ա, հոգիս ա, որ զգում ա, ազգիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքն առաջիս քանդգում, իմ սիրելի ախազօր աղի արտասունքը ու դառը սուրբ՝ սիրտս էրում, խորովում, բնշպէս բերնիս հուփ տամ. արինս քթովս ա զուս գալիս, աշքս կայծ ակին տալիս. ջանս էլ տամ, էլի իմ թանկազին ազգի արինն ու ոս կերքը Հօրագեալու հողումը չորացած՝ կարեի ա՝ թէ մէկ մարդի չէրեէր, մէկ մարդ չիմանար, թէ ես էլ էս տեղ պէտք է զոհ ցլիի, չիմանայի, չտեսնէի, չլայի ու աղի արտասունքով չխընդ-քէի... » *)

« Ախ Վաթան, Վաթան՝ քու հողին զուրբան,
« Քո ծխին զուրբան, քո ջրին զուրբան.
« Է՛ս փառքն ունէիր, էս պատին առաջ,
« Որ հմիկ աւերպիլ, մնացել ես անջան...»

« Ընչի ձեր վախտը աշքս բաց չարի,
« Մարմինս հողին, ջանս ձեղ չտվի,
« Որ հմիկ էսպէս չթոշէի, չգայի,
« Ձեր հողը չտեսնէի, ձեր վրայ չլայի:

« Հող ունինք՝ խլած, կեանք ունինք՝ մեռած,
« Ա՛խ՝ ջրի, կրակի մենք եսիր զառած,
« Ոչ երկինքն տեսնի մեր սուզն ու լացն,
« Ոչ երկիրն պատովի՝ մեղ տանի ցած...»

« Ա՛խ՝ մեր սիրտն էսպէս ընչի հովացել,
« Սրինը ցամաքել, մեր կուրը թուլացել.
« Երաք կտենիմ ախ՝ ես մէկ օր էլ,
« Մեր սուրբ երկիրը թշնամուց ազատիլ.

« Էն ինչ շունչ կրլի, որ էս նոր հոգին
« Փշի, վեր կացնի քնից մեր ազգին.
« Էն ինչ ձեռք կրլի, որ մեր աշխարքին
« էլ եղ սիրտ տայ ու կանգնացնի կըկին:

« Ա՛խ՝ ես էն ձեռին կեանքս զուրբան կանեմ,
« էն կոխած հողին երեսս կըսեմ,

*) նոյնը, էջ 169—170.

« Ապրիմ՝ իմ արինս նրա մատաղ կանեմ,
« Մեռնիմ՝ հողիցն էլ միշտ նրան կօրհնեմ... » *)

* *

Սակայն ովկ և ինչն էր այսշափ քազմակողմանի զգացմունք. ներ ներշնչում Աբովիանին. թող ինքը պատմէ.

« Ոչ քաշն-երեսուն տարուց աւելի ա՝ իմ ազիզ հէր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթւում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուրբ իմ աշքիցս, ախն ու ոխը իմ բերնիցս չի պակսում, այ իմ արիւնակից բորեկամք, որ մէկ միտքս, ու մուրազս ձեզ պատմէի ու յետոյ հողը մտնէի. Սմէն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամէն սհաթ մահուան հրեզէն սուրբ գլխիս պտտում էր, ամէն բովէի ձեր սիրտն ու զարբ՝ հոգիս էրում, մաշում էր, լսում էի ձեր քաղցր ձէնը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ազնիւ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սէրն ու բարեկամութիւնը, մըտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծութիւնը, մեր առաջ՝ էն հիմանալիք թագաւորաց, իշխանաց գործքն ու կեանքը, մեր չայրենեաց, մեր սուրբ աշխարքի առաջվան սքանչելիքն ու հրաշը մեր ընտիր ազգի աննման բնութիւնը ու արած քաջութիւնները. Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատող ցոյց էր տալիս՝ թէ ինչ աշխարքի ծնունդ եմ ես, Դրախտը մտքում էր կենդանի, որ ինձ երազում, թէ լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատուականութիւնը՝ իմ առաջս էր բերում, չայկ, վարդան, Տրդատ, Լուսաւորիչ՝ քնած տեղս էլ ինձ... անդադար ձէն էին տալիս, թէ չայկայ զաւակն եմ ես, նոյեան թոռը, էջմիածնայ որդին, զբախտի քնակիշը, զաշտում, թէ ժամում, չօլում, թէ տան՝ էն քարերն էլ ուղում էին՝ որ սիրտը պոկեն, հանեն ուրտեղ որ իմ ազգի ոտը կոխել ա, ու էս օր էլ կոխում ա, շատ անզամ մէկ չայ տեսնելիս, ուղում էի՝ էլած շունչս էլ հանեմ, նրան տամ. բայց ախ՝ լեզուս փակ էր, աշքս բաց, բերանս բռնած, սիրտս խօր, ձեռս պակաս, լեզուս կարճ. գանձ շունէի, որ գործով ցոյց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի... » *)

.... չայաստան հրեշտակի պէս առաջիս կանգնել՝ ինձ

*) նոյնը, էջ 250—251. **) նոյնը, էջ IV., V.

թե էր տալիս ծնող, տուն, երեխայութիւն, ասած, լսած բաներ էնպէս էին կենդանացել, որ էլ աշխարքը միտքս չէր գալիս: Ինչ խուլ, կորած, մոլորած մտքեր ունէի, բոլորը բացվել, եղ էին եկելի նոր էի իմանում, որ գրաբառ ու ուրիշ նկազներ՝ մինչև չն սհաթը միտքս փակել, բխովել էին...*)

Եւահա Սբովեանն իր այդ գաղափարներն ու գերակաները մարմնացնում է Աղասու անձնաւորութեան մէջ։ Մէկ բարիկենդանի աշակերտներու որ բաց թողի, սկսեցի՝ ինչ որ երեխութիւնից լսած, կամ տեսած բան գիտէի, տակ ու զյուխ անիլ: Վերջը իմ ջրաւան Աղասին միտս ընկաւ, նրա հետ հարիր քաջ չայի տղէրը էլ իրանց գլուխը բարձրացըին ու ամէնն էլ ուղում էին՝ որ իրանց ոտը գնամ: Միւսները մեծ մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլայ սաղ սալամաթ՝ փառք Աստուծոյ, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին դուրբան. Ասեցի կեղծաւորութիւն չանեմ, նրան ընտրեցի...: **)

Աղասին, Աղասին. ով է այդ զգացմունքների աշխարհում ապրող, անձնանուէր, հայրենասէր, ծնողասէր և իդէալական պարզ բնաւորութիւն ունեցող երիտասարդը—եթէ ոչ Սբովեանի երկրորդ եսը, նոյն իսկ ինքն Սբովեանը.

Այդ բոլորը, ինչ որ ասում ե զգում է Աղասին՝ Արովեանի զգացմանց արտայայտութիւնն է. այդ է պատճառն ահա, որ զգացմունքների զեղման հետ համեմատելով՝ շատ քիչ գործողութիւն կայ Վէքքըում, վիպական կապակցութիւնը թոյլ է և ընդմիջումներով ու մենախօսութիւններով լի: Միմիայն Աղասու անձնաւորութիւնն է սկզբից մինչև վերջն աշքիդ առաջը, միւս տիպերը ստուերների նման երեսում և կարճ միջոցից յետոյ նորից անյայտանում են:

Աղասին ամեն բարեմասնութեանց տէր և իդէալական անձն է. Նրա թէ ներքին, հոգեկան արտայայտութիւնը և թէ արտաքին, մարմնի յատկութիւնները գերազանց են. նա ամենքին սիրում է և ամենքն էլ նրան են սիրում. «... Աղասու բարի խասիաթը, բարի սիրտն ու հոգին քիչը կունենան: Են հասակը հասել էր, քսան արարին անց կացել՝ նա զեռ հօրնը մօր առաջին էնպէս էր, ինչպէս մէկ անմեղ զառը: Մէկ օր նրանց խօսքիցը չէր դուռ էկել. մէկ օր նրա բերնիցը մէկ թթու խօսք չէր լըսպած. աշքը նրանց աշքին առնելիս, նա նրանց միտքը իսկոյն

*) նոյնը, էջ 19, Տ.**) նոյնը, էջ 19.

իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի...*)

Գեղղցիք բոլոր նրա արեւովն էին խնդում, նրա գլխովն օրթում ուտում: Ամէնի աշքը նրա վրայ էր, նրան էր գովում, նրան էր օրհնում: Մէկին մէկ փորձանք դիպչելիս, կամ մէկ դարդ ունենալիս, նա իր գլուխը եղ էր զնում, նրա մուրազին հասնում: Բերնի թիքէն հանում էր, ուրիշին ուտացնում: Էնքան իր ապրանքին, իր հանդին ու մալին չէր մուղայիթ, որ քան իր հարեւանների:**

Ամբողջ գիւղն երգում է.

« Աղասի ջան՝ գլուխիդ զուրբան՝
« Թու ես մեր թագն ու պարծանքը:
« Աշխարքս որ բոլոր մանգան,
« Ով կի հատդ, զու մեր կեանքը: »

« Գլխավդ միշտ պտիտ կըգանք,
« Առ մեր հոգին՝ զու մեր հրեշտակ,
« Թէ թաղես էլ մեղ՝ ձէն կտանք,
« Էլ քեզ կօրհնենք, քեզ դուրբան գնանք: »

« Երկներին զու լիս ես աալիս,
« Եաղկներին հոտ, համ ու հոգի.
« Թաշտ, սար ու ձոր քեզ տեսնէլիս.
« Գլուխ վեր բերում քո առաջի: »

« Թիւլբիւն մեռած սազիդ ձէնին.
« Վարդն թոռումած՝ սէրդ յիշելիս,
« Ա՛լ են քաշում, տալիս գլխին.
« Վայ են ասում, զու մտիկ չտալիսույս: »

« Քանի սաղ ենք, քեզ ըլինք զուրբան,
« Քո շվաքիդ տակին մնանք.
« Ախ, թէ մեռնինք, մեր գերեզման
« Էլ զաս, կոխես, որ զինջանանք...***)

« Մեծամարգիքը, ջահէլ տղէքն էս կողմից վրայ թափեցին, որ Աղասու ձեսին, ճակատին պաշ անեն, քեօխվէն չթողաց՝ որ քնահարամ չըլի: Միւսներին ուզում էին սաղ սաղ ուտեն,

*) նոյնը, էջ 25. **) նոյնը, էջ 25. *** նոյնը, էջ 28

Էնքան դօշըներին կպցրին նրանց: «Օրհնըվի էն կաթըլ մը
դուք կերել էր. էն հողը՝ որ ձեզ ծնել ա. տղէն էղպէս կըլի,
թէ չէ քանի լեզուդ կարճացնես, գլուխդ կախ անես՝ ուսերիդ
կնատեն, զուղդ կքամեն, աշքդ կհանեն, ջիգեաբդ վեր կածեն.»*)

Սղասին բարեգործ է ու մարդասէր.

«Ճանաւուէրի տղէն էր, աղքատի ու նաշարի ընկէր: Մըր
էր նրա դուռը դալ՝ սուփրէն էր բաց անում, կամ քիսէն,
ում գութան չունէր, իրանցը բան տալիս, ում եզն ու հոտաղ
չունէր, իրանցն ուղարկում. ում փող չունէր՝ որ մշակ բռնի՝
իքին էտի, փորի, ես թաղի, կամ թաղը ետ տայ, ինքն էր
առաջ ընկնում, գեղի տղէրը հաւաքում ու գնում նրա բանն
առանց խնդրելու անում, ու իքու տէրը մէջը մտնէլիս՝ աշըը
մնում առած՝ նրան ումբը ու արև խնդրում, չունքի թէ մէկ
տարի վաղն անթաղ մնայ մեր աշխարքումն, իսպառ կըշ».
բանայ.»: **)

Նա ունի քաջութիւն և ոյժ.

... Նրա թվանքի գիւլլէն դարդակ չէր անց կէնալ: Սիրտն
էնքան բարի էր՝ որ նհալս տեղը զուշ էլ չէր սպանիլ, մոջիմը
կոխիլ, ամա հարամի թշնամու ձեռին տապակուելով գի-
շէր ցերեկ, որ թէ էնպէս էր պատահում, որ թուրքերն էկել
էին բաղը լցվել, կամ իրան սպանիլ, կամ հարևանին, էն ժա-
մանակը երկնքումն ըլէր, վեր կըգար, գեղի էն կողմիցը ձէն
տային, իսկոյն ական թօթափել հազիր էր, ու թէ բառով
բանը չէր վերջանում, էն ժամանակը նա իրան թըր թվանքի
ու կուան հունարը էնպէս էր ցոյց տալիս, որ թշնամին մնում
էր կատու դառած, կամ նրա ձեռին, հնձանի տաքարին զուր-
բան ըլում, որ թաղում, ծածկում էին, չունքի հազար անգամ
էին փորձել վարագուրդ արել, թէ մինչև Տաճկին չծեծես, քեզ
բարեկամ չի դառնալ: Էնքան զվաթով էր՝ որ ձեռը տղամարդի
գոտիկը որ չէր քցում, հաւի ճուտի պէս բարձրացնում, գլխի
ծէրն էր հանում, պահու տալիս, էլ եղ վեր բերում: Զին նի
ըլելիս՝ որ ձեռը չէր բարձրացնում, առլան ձին կզանում էր
ու մէջը դէմ անում: Հինգ մարդ վրայ թափէին, բռանց ձեռը
կոլորէին: Դոմչի կամ եղան բողազը մէկ թուր խփելով՝ էնպէս էր
զուս կտրում, որ թըր ծէրը գետինն էր խրվում: Զատ անգամ

*) նոյնը էջ 214, **) նոյնը էջ 25

քսան հարամի հէնց թըրի ոռքովն էր յետ ածում: Թուրքերը
նրա անունը լսելիս լեղապատառ էին ըլում: Զատ անգամ կոխւ
քցած վախտը՝ հէնց նրա ձէնն իմանում էին թէ չէ, ճանճի
պէս ցրվում, զէս ու զէն էին կորչում, գիւմ ըլում: Անունը
ասլան բարասի էին զրել...» *)

«Թագաւորներ հասրաթդ քաշեն,

Որ ուն էնան քեզ պէս որդի:

Քո անունը երբ լսում են,

Թող են զառնում քո թշնամիք... » **)

Նա պարթե և գեղեցիկ տղամարդ է.

«Նրա սուրահի բոյը, նրա թալի-թալիս աշքերը, նրա զալամով
քաշած ունքերը, նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա
անուշ լեզուն, քաղցր ձէնը, նրա լէն թիկունքը, բարձր ճակա-
տը ու ոսկեթել ճալկերը՝ մարդի խելք էին տանում, տեսնողը
մաթ էր մնում չէր կշտանում: Մազը ձեռն առածին պէս, քա-
րին, փէտին չունչ, հոգի, լեզու էր տալիս. զորդ ա, արեն
երեսն էրել, գունը փախցրել էր, ամա ծիծաղելիս՝ որ աշք
ու ունքը չէր բաց անում, հէնց իմանաս՝ վարդ է բաց ըլում,
երեսիցը լիս վեր թափում: » ***)

«Տանիցը որ դուս ես գալիս,

Ամենիս աշքն վրէդ մայիլ՝

Բարձր լեզուդ մենք լսելիս

Ռտիդ տակին ուզում մեռնիլ.

Ղալամով աշքերդ ա քաշած,

Սուրայի բոյդ մէկ չինարի.

Ծշխարքի աշքն քր վրէն մեռած,

Սղասի ջնն՝ մեղ մօտ արի: » ****)

Սղասին այզքան բարեկամնութիւններ ունենալով հարկաւ
պէտք է լինէր նաև իր համագիւղացինների և նամանաւանդ
դեռահաս աղջիկների իդէալը.

«Ճատ հէրնը մէկ երանի էին տալիս նրա հօրն ու մօրը՝ որ
էնպէս բարի զտակ ունէին: Ինչ տեղ մէկ մէջլիս, կամ մէկ
սուփրայ էր բաց ըլում, նա էր նրանց վլումը, ուրախութիւն
ու քէփ չհանց աւողը: » *****)

*) նոյնը, էջ 26, 27 **) նոյնը, էջ 28 ****) նոյնը, էջ 26 *****) նոյնը, էջ 29

*****) նոյնը, էջ 26-28

«Ճատ մօր աչքի մնացել էր կարօտ, որ նրան իր փեսայ շինի, նրա դլխովը պահտ գայ, Զահիլ աղջկերքը նրա ձէ նր լուկիս, ուզում էին որ նոգիները տան. Ճատ անգամ, զրի ճամփին, կամ տան կտրներին կանգնած տեղը, որ Աղասուն անց կենալիս չէին տեսնում, էնպէս էին կարծում թէ հրեշտակ է անց կենում, մնում էին քարացած, մայիլ էլած: Նրա ձէնը լսելիս, նրա բոյը տեսնէլիս, սիրտները կրակ էր ընկնում, խելքները գնում, ուզում էին իրանց հոգին հանեն, նրան առան Զան գիւլում ասէլիս, կամ ֆալ քցէլիս, կամ թիզ բաց անէլիս, ամէնն էլ իրանց մտքումը նրան էին դնում, երազում նրան տեսնում, վէր կենում՝ նրա սիրուն՝ ախ, ոխ քաշում նրա ձեռի խնձորը, կամ վարզը, որ մէկի ձեռն էր ընկնում, որ փթում էլ էր, կամ չորանում, էլի նա ծոցիցը չէր հեռացնում, քնէլիս բարձին էր դնում, զարթներիս դօշին, երեսին, կամ քթին: Մէկ տեղ զօնադ ըէլլիս՝ հազար տեղից պատի արանքից, գոփ շիմից, տան պուճախից՝ հէնց նրան էին մտիկ տալիս և շատը ուզում էր թէ հէնց էն սհաթը՝ եա Աղասու ձեռը նրա ձեռին դիպչի, կամ շունչը շնչին, եա թուրը սիրտը մրտնի, որ չուտով նրա արենին մատաղ ըլի, որ Աղասին նրան թազի, Աղասու սիրտը նրա համար մըմնջայ, Աղասու տչքը նրա վրայ լայ..»: *)

Բայց Աղասու ամենավսեմ առաջինութիւնն այն է, որ էլսքան զարմանալի յատկութիւնները ունէնալով՝ էլի երեխի հետ երեխայ էր, մեծի հետ՝ մեծ. Խանի, Ճահի առաջի էնպէս էր կանգնում, ջուղաբ տալիս, որ հէնց իմանաս թագաւորի որդի ըլի: Միծաղն ու խնդութիւնը նրա երեսիցը պակաս չէր հարկիզ, էնքան պարզ էր նրա սիրտը, էնքան հանգիստ նրա խոճմատանը, էնքան արզար նրա հոգին: նրա ամէն մէկ խօսքը անգին ջաւահիր էր..»: **)

Սփսո՞ս, որ բոլոր աղջիկների իղէալ Աղասու „հրաշալի նազուն,, միմիայն Աղասուն զրած մի նամակով է ցոյց տալիս իր գոյութիւնը. նրա նկարագրութիւնը չկայ: Դրա փոխարէն նկարագրուած է թագուհին, այն աղջիկը, որին պարսից դինուորներն ուզում էին փախցնել և որի պատճառով Աղասին սարէսար ընկաւ, քարէքար և ծնողներից զրկուեց:

*) նոյնը, էջ 27. **) նոյնը, էջ 27:

Ահա այդ բուն հայ դեռահաս աղջկայ կենդանի պատկերը: Աթագուհին, Թագուհին, աշխարքի աչք, Թագուհին, երկնը տակին, գետնի երեսին անթառամ ծաղիկ Թագուհին, զբախա, մանիշակ, անգին, անհատ, աննման Թագուհին, ինչ լեզու պէտք է ըլի, որ նրա զովասանութիւնը պատմի. Ի՞նչ աչք, որ նրա տեսքն ու կերպարանքը մէկ բանի նմանացնի: Շարմաղ, լուսաթաթախ երեսը, որ արեգակի պէս լիս էր տալիս, ու վարդի պէս փայլում, զառել էր սպիտակ քաթան, սառել սպրթնել: Էն երկնանման աշքերը, որ տեսնողի հոգին վառում, կրակում էին, ընկել էին խոր, փակվել, կուլ գնացել: Թագուհին, մօրը մէկ Թագուհին, որ հրեշտակի նման, ում որ մէկ մտիկ էր տալիս, հոգին անմահական խընդութիւնով լցում էր: Նրա թուխ-թուխ ունքերը, նրա շալ-շալ աչքերը, նրա նուեհատ թշերը, նրա բարակ-բարակ՝ զալամ քաշած պոռշները, նրա լուսեղէն ճակատը, նրա մարմառ, նուրբ քիթը, նրա բիւրիւլի լեզուն, նրա սոկեցնցուղ բուգը:

Մինչ էն հագաղը նրա ականջը՝ մէկ թթու խօսք չէր լսել, նրա աշըը՝ մէկ դառը օր չէր տեսել, նրա երեսը, մէկ կոշտ զից չէր էկել: Վարդի պէս ծաղկել, մանիշակի պէս մեծացել էր: Դեռ ոտը քարի չէր դիպել, զեռ մատը մէկ փուշ չէր մտել: Տասնը հինգ տարին անց էր կացել, զեռ նրա անմեղ հոգին աշխարքից մէկ բան չէր խարար: Նրա ընկեր աղջկերքը գտներին, կտրներին էին ման դալիս,, օր անց կացնում, նա ծունկը մօր ծնկանը կպցրած, եա կար էր անում, եա քարգան, եա իրանց տանն ու դռանն էր մտիկ տալիս, եա իրանց մալին, ապրանքին աչք ածում: Ղուշը գլխի վրովը թռչէիս, կարմրատակած, շոնչը կտրած, լեղապատառ տուն էր ընկնում, որ իր շվաքն էլայ մէկ ոքմին շտեսնի: Մօր մէկ մատը փուշ ըլելիս, եա մէկ տեղը ցաւէլիս, ուզում էր, հոգին հանի, իրան տայ, էլ քար, էլ խոռ չէր մնում, որ նա վրէն շը շոքի ու Աստծու ողորմութիւնը խնդրի: Աղջատ տեսնէլիս՝ բերնի թիքէն հանում, իրան էր տալիս, որ նրան օրհնի, նըրանց արեշտառութիւն խնդրի: Թաղն էլ՝ էն ժամանակն էր գընում, որ լիսն ու մութը զեռ շէր բաժանված ըլում. »)

») նոյնը, էջ 63, 64

Ըստ հրաշշալի նկարի դիմացը կտրելի է դնել սիրահա-
շուած Մուսիի գեղատեսիլ պատկերը, որի նկարազրութիւնն
արգէն առաջ բերինք.

Աղասի, Մուսի, Թագուհի, Նազլու. սրանք են այն պարզ գոյներով օրանչելի նկարուած պատկերները, որ դեռ երկար ժամանակ մեր գերածնուած զբականութեան պահանջանի, մարդարացաշար ակունքներով զարդարուած՝ բուն ազգային գեղարուսատական կաճառի օրանները պէտք է զարդարեն. Իսկ սրահի ճակատին մշտապէս և անջնջելի ոսկէ տառերով զբոշմուած կլինի „Խաչատուր Աբովյան“ անունը.

պատճեն չեւ միաւրած թե ցոս պարզաւոր բար-
եցի ապահով օքան սիստ ով թիւն թիւ ու ես մաս
լաշ-լու այս ցղցցու պիտիւնի այս ով եւուց խօսված
եւոյս բազաց-թացա այս ցղցի սուսած այս ցղցցո
յուն այս ցատիւն օքանու այս ցղցուու եւուց
բարեկըրս այս ժայռի գրդաւու այս ցղցի պատ

504

25 MAY 2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0568539

